№ 11—12 (188) XVII ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՎՏԱՆԳԱԼԻ ՀԵՌԱՆԿԱՐ

Շահնշահի պետութիւնը չարագուշակ ճկնաժամ է ապրում—թէ իր ներքին կացութեան և թէ արտաքին յարաբերութիւնների մէջ։ Վերածնութեան ազատարար հոսանքի հետ նրա ամբողջ տարածութեան վրայ փչում են նեաճողական հողմերը, որոնք ձգտում են յօշոտել նրան, խախտել հինաւուրց և թանկագին անկախութիւնը, որով այնքան հպարտ է Իրանի փոքրիկ ժողովուրդը։

Թւում է թէ փրկութիւն չը կայ։ Պարսկաստանը մինչև օրս էլ թատր է եղել կապիտալիստական մեծ պետութիւնների մրցակցութեան, բայց երբէք նա չի եղել այնքան հրապուրիչ կուսակնձոր այդ գիշատիչ մրցակիցների համար և երբէք արտաքին արշաւանքի ու յօշոտման վտանգը չէ եղել այնքան կոնկրետ, այնքան շօշափելի, ինչպէս այսօր, անգլօ-ռուսական համաձայնութիւնը կռելուց ի վեր։ Արևելեան դժբախտ ու յաւիտենական ողբերգութիւնն է դա, այդ ողբերգութեան մի ուրիշ արարւածն է, որ խաղացւում է մեր առջև։ Նա փոխադրւած է մի այլ միջավայր, բայց նման են պարագաները, և նոյնն են գլխաւոր դերակատարները։

Երբեմն Պոլիսն էր մրցման կենտրոնը։ „Արևելեան հարց" ուրիշ ոչինչ չէր բայց եթէ „Մոսկովի" յամառ ու անխռով առաջընթացութիւնը դէպի Պոլիս, որին տիրելով, կարելի էր ձգտել և դէպի հեռուն, դէպի Հնդկաստան։ Սակայն փոխուեցին ժամանակները, երևան եկան նոր ու աւելի ճոխ որսավայրեր, Ստամբուլը կորցրեց իր վաղեմի հմայքը և ռուսական բռնապետութեան աւարատենչ ախորժակները գնացին յագենալու Չինաստանի անապատներում։ Այդտեղ ևս բախտը ձախորդ հանդիսացաւ և „Կոլօսը"՝ խորտակւած ու հմայազուրկ՝ վերստին սխմեց իր շահատակութիւնների հորիզոնը, և հեռաւոր Արևելքից, ուր նա նետւել էր գաճաճ ուժերով համաշխարհային մրցման կրկէսը, վերստին դիմեց դէպի մերձաւոր Արևելքը, ուր Պետրոս Մեծի օրերից ի վեր բախտը յաւերժօրէն ժպտացել էր նրան, ուր ռուսաց զէնքը տարել էր այնքա՜ն „գոռ յաղթանակներ" աւելի գաճաճ ոսոխների դէմ...

Թեհրանը դարձաւ դիւանագիտական ինտրիգների նոր ասպարէզ։ „Արևելեան հարցը" այդպիսով հսկայական պտոյտներ արաւ ամբողջ ասիական Արևելքում—Ստամբուլից դէպի Մուկդէն և ապա դէպի յետ, դէպի Թեհրան։ Եւ այդ ահագին մարտակրկէսում մենք տեսնում ենք միշտ երկու վաղեմի ախոյեաններին—Ռուսաստան և Անգլիա—որոնք աւելի քան կէս դարից ի վեր կռւել են Ասիայում, յանուն քաղաքական հեգեմոնիայի, մերթ յօշոտելով արևելեան անկախ, յետամնաց պետութիւնները և ազատելով նրանց ստրկացրած մանր ազգերին, մերթ պահպանելով, իրենց կատաղի հակամարտութեամբ, այդ պետութիւնների ամբողջութիւնը և պինդ կռելով հպատակ ազգերի շղթաները։

Հակամարտութիւնը քաղաքական էր և միանգամայն տնտեսական։ Ցաճկաստանում, ինչպէս երկրագնդի բոլոր ծայրերում, Անգլիան ձգտում էր շուկաներ գրաւել իր յարաճուն արդիւնաբերութեան ու արտահանութեան համար, ձգտում էր գրաւել „խաղաղ թափանցման" ճանապարհով, և նա այդտեղ անհրաժեշտաբար պիտի պաշտպան կանգնէր ազատ ըէժիմի, ազատ քաղաքական պայմանների, որոնք կարողանային դուրս բերել երկիրը իր միջնադարեան կացութիւնից, հաստատել այնտեղ մարդավայել կեանք, զարթեցնել պահանջներ, բարձրացնել թիւրքահպատակ ժողովուրդների սպառողական ու գնողական ոյժը և այլն և այլն. այդպէս էր Թեղադրում անգլիական բարգաւաճող կապիտալիզմի կենսական շահը. նա թեղադրում էր միաժամանակ՝ փակել ճանապարհը դէպի Հնդկաստան՝ ստեղծելով թիւրքական Արևելքում ազատ, ինքնավար ժողովուրդներ... Եւ այդ ձգտումները բնականաբար պիտի բախւէին Ռուսաստանի քաղաքականութեան հետ, որը իրեն ղեկավար ունենալով Պետերհոֆի ռազմասէր կամարիլլան, տասնեակ տարիներից ի վեր ձգտում էր միշտ աւելի և աւելի ընդարձակել իր ազդեցութեան հորիզոնները, ոչ թէ երկրի խղճալի արդիւնաբերութեան համար շուկաներ գրաւելու, այլ իրագործելու բռնապարտեան աշխարհակալութեան մի հսկայ ծրագիր, որ կտակւած էր Ռոմանովների այլասերւած տոհմին՝ Պետրոս Մեծից։ Բրիտանական քաղաքականութիւնը թիւրքիայում ևս անհրաժեշտաբար

պիտի բախէր ռուսականի հետ, որը ուզում էր տիրել Բոսֆորին, կլլել Հայաստանն ու բոլոր հպատակ երկրները և այնտեղից յաղթանակօրէն դիմել դէպի այն հարուստ, լայնարձակ աշխարհը,—դէպի Հնդկաստանը—որ Մեծ Բրիտանիայի մեծութեան հիմքն է ամբողջ Ասիայում։

Որքա՜ն փոխուած են հանգամանքները։ Կարծես չը-քացել է երկու հսկայ ախոյեանների մէջ այն սուր և անսանձ հակառակորդութիւնը, որ 50-ական ու 70-ական թուականներում բռնկւում էր այնքան ահարկու փոթորիկներով։ Մանջուրիայի ճակատամարտները և ռուսական յեղափոխութիւնը, շա՜տ յարաբերութիւններ յեղաշրջեցին։ Հիւսիսի „տիտանը“ ընկաւ զարհուրելի ճարճատիւնով իր ամբարտաւան բարձրութիւնից, նրա հռչակը մարեց ամբողջ աշխարհում և մասնաւորապէս՝ մահմէդական Արևելքում, ուր մինչ այն՝ ահով ու սարսափով ծունր էին իջնում „Մոսկովի“ առջև, իսկ այնուհետև սկսեցին արդէն ատամներ ցոյց տալ երբեմնի ահեղ աշխարհակալին։ Պօլսից մինչև Թեհրան, մինչև հեռաւոր Չինաստանը—արհամարանք ու արգահատանք դէպի զինուորական Ռուսաստանը...

Այդ իրողութիւնները չէին կարող չ՝անդրադառնալ բրիտանական մտածողութեան ու քաղաքականութեան վրայ։ Մեծ ոսոխը տապալուած էր, խոցուած իր ամենազգայուն նեարդի մէջ—իր զինուորական հմայքի մէջ։ Այլևս խաչ էր դրուած նրա հեռաւոր նուաճումների վրայ, Հնդկաստանին Մոսկովի կողմից այլ ևս վտանգ չէր սպառնում։ Միւս կողմից համաշխարհային մրցակցութեան հրապարակում միշտ աւելի և աւելի հաստատւում էր մի ուրիշ ոյժ, մի այլ վտանգաւոր հակառակորդ—Գերմանիան։ Նա աճում էր, ոչ միայն իբրև զինուորական մի պետութիւն, այլ և իբրև առևտրական-արդիւնաբերական մի նոր ու հսկայական օրգանիզմ, որ գալիս էր իր պատկառելի նաւատորմով խլելու Անգլիայից նրա ծովային տիրապետութիւնը։ „Գերմանական վտանգը“ շեշտւում էր նաև մերձաւոր Արևելքում, *Drang nach Osten*-ի քաղաքականութեամբ, որ առաջ էր մղում վարպետ ձեռքերով և նուաճում էր խաղաղ ճանապարհով մի շարք փայլուն կօնցէսիաներ սուլթանական կառավարութիւնից, որոնց շարքում առաջին տեղը բռնում է Բաղդատի երկաթուղային հսկայ ձեռնարկը։ Անգլիան դրանով վտանգուած էր տեսնում իր կենսական շահերը մի այնպիսի կարևոր վայրում, որպիսին է Պարսից ծոցը։ Գերմանական այդ սրարշաւ առաջադիմութիւնը արգիլելու համար էր, որ ծովերի թագուհին վերջ դրեց իր „վեհապանծ մեկուսացմանը“ և սկսեց փնտրել դաշնակիցներ ու բարեկամներ։ Նա դաշնակցեց Եապոնիային և կռեց համաձայնութեան ամուր կապեր Փըրանսիայի հետ։ Բրիտանական քաղաքագէտները չը-գոհացան դրանով։ Մամուլը սկսեց բարձրաձայն քարոզել անգլո-ռուսական համաձայնութիւն։ Թւում էր ցնորք։ Ատելութիւնները այնքա՜ն հին էին, այնքան խորարմատ։ Բայց հրապարակախօսները չընկճուեցին։ Եւ նրանց քարոզները ի վերջոյ արձագանք գտան ոչ միայն Անգլիայի պաշտօնական շրջաններում այլ և Ռուսաստանում, նոյնիսկ կիսապաշտօնական մամուլի մէջ։ Ո՞վ զարմանք։ Այդ վերջինը, որ տասնեակ տարիների ընթացքում թունաւոր ատելութիւն էր միայն քարոզել Անգլիայի դէմ, սկսեց փաստաբանել անգլո-ռուսական համաձայնութեան գաղափարը... Դա մանջուրական պարտութիւնից յետոյ էր... Զգում էին, որ իրենց խորտակուած ուժերի համար՝ Հնդկաստանը անմատչելի էր։ Եւ միւս կողմից՝ Պետերբուրգում ևս սկսել էին անհանգստանալ „գերմանական վտանգի“ հանդէպ, որը գնալով՝ դուրս էր մղում ռուսական ազդեցութիւնը Բոսֆորի ափերից և կատարելապէս տէր էր դառնում սուլթանի կամքին։

Եւ ահա նման շահերի քաղաքականութիւնը առաջ բերեց մի պատմական անակնկալ... Երկու դարաւոր ըմբիշները հաշտուեցին, բարեկամացան։ Անգլո-ռուսական համաձայնութիւնը ստորագրուեց։ Նա ստորագրուեց յանուն խաղաղութեան, բայց նա իսկոյն մատնեց աշխարհին իր ռազմական բնաւորութիւնը։ Նա բռնացաւ Պարսկաստանի անկախութեան վրայ, դարձաւ նրա համար ճակատագրական։ Պարսկաստանը առաջին տեղն է բռնում համաձայնութեան բանակցութիւնների մէջ։ Երկու հզօր պետութիւնները բաժանեցին այդ երկիրը „ազդեշրջանների“։ Հիւսիսային մասը բաժին ընկաւ Ռուսաստանին։ Երկրի այդ մասը. ահագին տարածութեամբ կտրուած լինելով ծովից և այլ հաղորդակցութեան ճանապարհներից, համեմատաբար քիչ կարևորութիւն է ներկայացնում առևտրական-քաղաքական տեսակէտից։ Շատ աւելի կարևոր է անգլիական ազդեցութեան շրջանը, որ ձգւում է աւազանական սահմանագլխից դէպի հարաւ, մինչև ովկեանը։ Բայց կայ երկու շրջանների միջև դարձեալ մի ահագին տարածութիւն, որ ընդգրկում է Պարսից ծոցը,—մի տեսակ չէզոք շրջան, որի մասին „համաձայնութիւնը“ խորհրդաւոր լռութիւն է պահում և որը ենթադրաբար պիտի բաժին ընկնի Գերմանիային... անշուշտ, բանակցող պետութիւններից մէկի հաւանութեամբ, միւսի տհաճութեամբ...

Այդպիսով ստեղծուեց մի նոր կուսակցական կապիտալիստական մեծ պետութիւնների միջև խաղաղութիւնը չէ, որ ապահովեց անգլո-ռուսական համաձայնութեամբ, այլ նոր պայթուցիկ նիւթեր ցրուեցին արևելեան հորիզոններում։ Պարսկաստանը առայժմ թերևս կանգուն կը մնայ իր կրօնակից Թիւրքիայի պէս՝ շնորհիւ եւրոպական պետութիւնների մրցակցութեան, հակամարտու-

թեան։ Ի՞նչ կը լինի յետոյ... Կատարւում է 20-րդ դարի սկզբում ամենակոպիտ բռնաբարումն „ազգայնական սկզբունքի“, որ դեռ անցեալ տարի 50-ական թւականներից հռչակւում էր, անգամ թագակիր հըրամանատէրների բերանով։ Սա մի նոր „Սուրբ Դաշնակցութիւն“ է ժողովուրդների անկախութեան դէմ... Աշխարհը մշտապէս առաջադիմում է,—գիւանագիտութիւնը միայն մնում է քարացած՝ իր հինաւուրց, ազատական դոկմաների մէջ...

Պարսկաստանը կապկապւած ոտքով-ձեռքով, մատնւում է երկու կամ երեք գիշատիչների։ Առանց հարցնելու ժողովրդի կամքը, առանց մազաչափ խնայելու նրա դարաւոր անկախութեան զգացումները,—գիւանագիտական մակեավիլիզմը, յենւած ուժեղի իրաւունքի վրայ, անօրինակ ցինիզմով գալիս է բաժանելու մի երկիր ազդեցութեան շրջանների և դրանով հիմք է դնում երկրի ապագայ կլանման... Հեռանկարը խիստ մռայլ է, վտանգալի։ Բայց արդեօք կապիտալիզմի այդ գիշատիչ անգղները միակ տնօրինող ֆակտորնե՞րն են Պարսկաստանի ճակատագրի... Անշուշտ, ոչ։ Նրանք կը ձգտեն առաջ տանել յաշտման գործը և միշտ էլ կ'աջողեն, քանի դեռ երկիրը կը շարունակէ դեգերել անիշխանութեան ու քաոսի մէջ։ Մերթ Ռուսաստանը, մերթ Բրիտանիան, մերթ երկուսը միասին՝ իրաւունք կը համարեն միշտ միջամտել ու „խաղաղացնել“... Անհրաժեշտ է, որ պարսիկ ժողովուրդը վերջնականապէս գտնէ ինքզինքը, որ երկրի բոլոր ժողովուրդները, մահմէդական և քրիստոնեայ, թեւթեւի տւած, ազատագրական մի բուռն շարժմամբ՝ իրենց ձեռքն առնեն երկրի երերուն ճակատագիրը և մղեն նրան դէպի հիմնական վերանորոգում։

Ո՞ՒՐ Է ՎԱԽՃԱՆԸ

Քաոսը մի արիւնալի ճակատագրականութեամբ շարունակւում է Ռուսաստանում և մարդիկ անձկանօք հարց են տալիս իրենց. „ո՞ւր է լուծումը“։ Երկու տարի է, արիւնը հոսում է մարդկային սպանդանոցներում, երկու տարի է, վիթխարի կայսրութիւնը տընքում է համատարած անիշխանութեան ու զինւորական դատարանների կոշմարի տակ։ Կախաղանները դարձել են ամենօրեայ, սովորական երևոյթ, նրանք դադարել են արդէն ցնցելու մարդկանց ջղերը, ազդելու նրանց սրտերի վրայ... Մի հսկայական նահատակութիւն է այս, որ կրում է երկու տարուց ի վեր Ռուսաստանի բովանդակ ազգաբնակութիւնը, միշտ արիաբար կուրծք տալով արհաւիրքներին, բայց և միշտ չարատանջ հարցը շրթունքներին. „մինչև ե՞րբ...“

Այո,—մինչև ե՞րբ։ Մենք չէինք բաժանում շատերի լաւատես յափշտակութիւնը երկու տարի սրանից առաջ, հոկտեմբերեան պատմական օրը, երբ ցարը, ժողովրդական բուռն գրոհից ահաբեկւած, հրատարակեց իր սահմանադրական մանիֆեստը։ Մենք աւելի շուտ սկեպտիկ էինք և „Դրօշակի“ խմբագրականով կոչ էինք անում չը թողնելով երբէք կուի դրօշն, հաստատում էինք, որ դեռ յաղթութեան կէս ճանապարհին ենք, որ բռնապետական հրէշը տապալելու և իսկական սահմանադրութիւնն իրագործելու համար անհրաժեշտ է կռիւ և դարձեալ կռիւ... Մենք գործ ունինք մի վիթխարի բռնապետութեան հետ, որ անտարակոյս, ամենաուժեղն է այն բոլոր համանման ուժերից, որոնց դէմ ուղղւել են ժողովուրդների յաղթական ըմբոստացումները մարդկային պատմութեան ընթացքում։ Նա միայնակ աւելի ուժեղ է, աւելի կազմակերպւած և աւելի դժնդակ, քան „Սրբազան Դաշնակցութիւնը“ և բոլոր միւս հակայեղափոխական դաշնակցութիւնները, որոնք այլ և այլ ժամանակներում լոյս են ընկել պատմութեան մրրկոտ հոսանքի մէջ՝ թումբ կանգնելու ժողովուրդների ազատագրական շարժումների դէմ։

Այդ գիտակցութիւնն ունէին և բոլոր զգաստ գլուխները Ռուսաստանի յեղափոխականների մէջ։ Ցարիզմը, որքան էլ թոյլ համեմատաբար իր ներքին կազմակերպութեան մէջ, որքան էլ ճարակւած ներքին կենտրոնախոյս, հակամարտ ուժերով, որքան էլ աղքատ ու ողորմելի իր ֆինանսներով, իր մտաւոր ու հոգեկան բագաժով՝ այնուամենայնիւ ջախջախիչ ոյժ էր հանդիսանում „ներքին թշնամու“, ցեղափոխութեան դէմ, որի կրողն էր մի ժողովուրդ՝ որ իր ճնշող մեծամասնութեամբ վերին աստիճանի խաղաղ էր, առանց մարտնչող, յեղափոխական տեմպերամենտի և սիրահար իր հինաւուրց, յաճախ ցարամոլ աւանդութիւնների...

Դեռ ընդամենը մի 10 տարի սրանից առաջ այդ զգաստ մտածողներից մէկն ասում էր, որ Ռուսաստանը կարող է փրկել միայն մի տարերային զօրութիւն, մի մեծ աղէտ—սով, պատերազմ, համաճարակ—որ դրանից դուրս՝ չէք փրկուիր։ Այդ սարսափելի գուշակութիւնը մասամբ արդարացաւ։ Հարկաւոր եղաւ եապոնական աղէտալի պատերազմը, հարկաւոր եղան Մանջուրիայի հարիւր հազարաւոր դիակները, որպէս զի պայթէր ցարիզմի հսկայական կրակը, որպէսզի բացւէին երկրի ազատութեան դռները։ Ցարերային պատուհասը հեշտացրեց արդէն ներքին ըմբոստ ուժերի ծաւալումը, որը հասնելով իր ծայրայեղ լարման աստիճանին՝ վայրկենաբար շփոթութեան մատնեց ցարին և կամարիլլային և խլեց նրանցից 1905-ի հոկտեմբերեան մանիֆեստը։ Այդտեղ էլ, աւա՜ղ կանգառաւ ցեղափոխութեան առաջխաղացութիւնը։ Հսկայական մակընթացութիւնից յետոյ սկսւեց նոյնպիսի հսկայական տեղատւութիւն։ Ապստամբութեան բուռն, յաղթական արշաւանքները փոխարինւեցին Ստոլիպինեան զարհուրանքներով։ Երկիրը զգաց, որ գերգնահատել էր իր հրաբխային զօրութիւնը, բռնապետութիւնն զգաց, որ դեռ արիւն կայ իր երակներում, որ դեռ ունի իր հաւատարիմ թեւ ու թիկունքը, իր անյաղթելի յենարանը—սինոդը։ Եւ յենւած

այդ վայրենի գործիքի վրայ, նա արշաւեց ամբարտաւան մոլեգնութեամբ, տրորելով իր ոտքերի տակ այն բոլոր սուրբ հռչակուած սկզբունքները, որ յայտարարուել էր հոկտեմբերի 17-ին նոյն թագակիր բռնաւորի բերանով։ Երկու Դուման արձակուեցին իրար ետևից առանց լուրջ պատճառաբանութեան, լոկ ուժեղի իրաւունքով,— արձակուեցին, որովհետև ժողովրդական էին, որովհետև այսպէս թէ այնպէս թարգման էին հարիւր միլիոնաւոր ազգաբնակութեան աղաղակող պահանջների։ „Դուման“ այնուամենայնիւ անհրաժեշտ էր թուում նոյնիսկ ցարական կառավարութեանը՝ թէ ներքին և թէ արտաքին նկատումներով։ Փոխառութիւններ կնքելու համար՝ արտասահմանը ուզում էր ունենալ և Ռուսաստանի ժողովրդական ներկայացուցչութեան համաձայնութիւնը։ Անհրաժեշտ էր գէթ պարլամենտի մի նմանողութիւն, թէկուզ մի այլանդակ պատրանք, առանց որևէ գործօն դերի, որ լռելեայն նւիրագործէր ցարիզմի բոլոր ձեռնարկները։

Սակայն այդ մեծ մտահոգութեան հետ մենք տեսնում ենք ստոլիպինեան քաղաքականութեան մէջ մի հիմնական, անդրդուելի ձգտում՝ յետ շուռ տալու պատմութեան անիւը, խպառ ջնջելու հոկտեմբերի 17-ը, և վերականգնելու իրականապէս ու իրաւապէս՝ անսահման բռնապետութեան հին ռէժիմը։

Յունիսի 3-ի պետական հարուածը դրա ակներև ապացոյցն էր։ Հակառակ հիմնական օրէնքների՝ յեղաշրջուեց ընտրողական սիստէմը, այնպէս որ ժողովրդական գանգուածները դուրս նետուեցին ընտրութիւններից և ասպարէզը մնաց հողատէր ազնուականութեան և խոշոր բուրժուազիային։ Երրորդ Դուման կազմուեց այդպիսի բացառիկ պայմաններում, և նրա կազմը, բնականաբար, յուսատու ոչինչ չի պարունակում։ Ծայր ձախակողմը — սոցիալիստներ ու սոցիալ-դեմոկրատներ —համարեա թէ գոյութիւն չունին, իսկ ռամկավար սահմանադրականները (կադէտ) համեմատաբար չնչին թիւ են։ Երկու տիրող կուսակցութիւններն են—աջակողմեան արքայականներն և հոկտեմբերեանները, երկու ուժեր, որոնք ունին շատ մօտիկ ազգակցութիւն։ Վերջինները կանգնած են հոկտեմբերեան մանիֆեստի հողի վրայ, այսինքն իրենց դաւանանքով պէտք է լինին սահմանադրականներ, բայց այդ երկչոտ սահմանադրականութիւնը համարեա թէ սահմանակցում է ինքնակալ միապետութեան։

***

Եւ գումարուեց երրորդ Դուման Ռուսաստանի ժողովուրդների համատարած անտարբերութեան մէջ։ Բռնապետութիւնը ծափ զարկեց։ Հասա՜ւ, վերջապէս, փափագած օրը, եկա՜ւ վերջապէս, „իսկական ռուս մարդկանց“ հլու, հաւատարիմ պարլամենտը, որ կ'երկրպագէ միահեծան պետին և ներդաշնակ կը ձայնակցէ նրան՝ բովանդակ քաղաքականութեան մէջ։

Ո՜վ զարհուրանք... Այդ յոյսերն էլ խորտակուեցին... Գէթ առ այժմ խորտակուած են։ Քիչ առաջ, նոյեմբեր 13-ի պատմական օրը, երբ քննւում էր միապետին ղրկելիք ուղերձի հարցը՝ ցարիզմը մի դառն անակնկալ ունեցաւ, որ միաժամանակ ծանր ապտակ էր այդ միապետին ու նրա ամբողջ մինիստրութեան։ „Պարլամենտը“, նոյնիսկ այդ այլանդակ ծաղրանկարը ազգային ներկայացուցչութեան՝ որ կազմուած է մեծ մասամբ „իսկական ռուսներից“ ու արքայասիրական մեծ „բուրժուաներից—անգամ այդ պարլամենտը իր ճնշող մեծամասնութեամբ մերժեց յիշատակել ուղերձի մէջ „ինքնակալ“, „միահեծան“ տիտղոսը և հասկացրեց Նիկոլա II-ին, որ նոր կարգեր են սահմանուած այժմ Ռուսաստանում, և որ ցարի միահեծանութիւնը այժմ արդէն սահմանափակուած է։

Ահա խոշոր ու հրահանգիչ պատմական իրողութիւնը։ Աջակողմեան արքայականները միայն զատուեցին—թուով 100-ից քիչ աւելի—և կազմեցին իրենց յատուկ ուղերձը։ Լեհերը և ծայր-ձախակողմեանները հրաժարուել էին որևէ մասնակցութիւնից։ Զափազանց փափուկ էր հոկտեմբերեանների դիրքը։ Մի կողմից նրանք կուզէին միանգամայն բարեյոյս լինել արքայի առջև, բնաւ չըմբոստանալ նրա կամքի դէմ։ Բայց միւս կողմից էլ չէին կարող ընդունել „ինքնակալութիւն“ բառը և հանդիսաւոր կերպով դաւաճանել իրենց դրօշակին, որի վրայ գրուած է „հոկտեմբեր 16“։ Հոկտեմբերեանների այդ սահմանադրական ընթացքին քիչ չը նպաստեց ծայր—աջակողմեանների բռնած դիրքը, նրանց անվայել, խուլիգանական պրովոկացիաները։ Եւ ահա հոկտեմբերեան կուսակցութիւնը ևս ենթարկուած բանադրանքի՝ կառավարչական շրջաններում... Երկար կը տևէ այդ—յայտնի չէ։ Հոկտեմբերեանների մէջ կան տարբեր, խիստ առաձգական աշխարհայեացքով՝ որ կարող է մի օր թեքուել դէպի ծայրագոյն աջակողմը։ Դուցէ նոյեմբերի 13-ը միակ օրը մնայ՝ կադէտ-հոկտեմբերեան համերաշխութեան։ Ինտրիգը իվերուստ գործում է անդադար՝ այդ համերաշխութիւնը քանդելու համար...

***

Առ այժմ՝ դառն, ցաւագին հիասթափութիւն բարձրը շրջաններում։ Երրորդ Դուման էլ՝ սահմանադրութեան կողմնակից։ Երրորդ Դուման էլ՝ ինքնակալ միապետութեան հակառակորդ։ Փաստը անյապաղ արձագանք կը տայ ամբողջ քաղաքական ֆինանսական աշխարհում։

Հնարաւո՞ր է տանել մի այդպիսի ապտակ։ Կարող էր լռել այն խղճուկ բռնաւորը և նրա կոյր աջակիցները, որոնք վճռել են, թէկուզ ներօնական սարսափներով, յաւիտենականացնել մի դրութիւն, որից միջնադարեան նեխուածութեան հոտ է բուրում։ Նրանք չը լսեցին։ Ընդհակառակը նրանք մի անսովոր փութկոտութեամբ հրատարակեցին իրենց պատասխանը՝ „ապստամբ“ Դումային։ Հետևեց փոքրիկ ներօնի „դեկլարացիան“, կծու, թունոտ, գրգռիչ ու սպառնական։ Մինիստր Ստոլիպին, կառավարութեան անունից կարդաց այդ հրովարտակը Դումայում։ Ապշանք և զայրոյթ։ Ստոլիպին յայտարարեց, որ ցարը այսուհետև էլ մնում է ինքնակալ և միահեծան, որ Ռուսաստանը մնում է ինքնակալ միապետութիւն, որ այդ ձևով միայն նա կարող է ապրել ու բարգաւաճել... *Finita la comedia!* Այդպէս վերջացաւ երկու տար-

ւայ անպատիւ կատակերգութիւնը... „Պետական հարուածը“ այժմ կատարեալ է և արդէն խօսում են երրորդ Դումայի արձակման մասին։ Էլ ի՞նչ Դումա—այսուհետև... Սև-հարիւրակեան մամուլը այժմ էլ հոկտեմբերեաններին է հռչակում՝ իբրև հայրենիքի դաւաճաններ ու խառնակիչներ։

Եթէ կառավարութիւնը հիասթափուած է Դումայից, ապա վերջինն էլ, յանձին նոյնիսկ իր ամենաչափաւոր ֆրակցիաների՝ իսպառ յուսախափ է կառավարութիւնից։ Կադէտները իրենց անուղղելի լաւատեսութեան մէջ հաւատում էին Ստօլիպինին, հաւատում էին որ քանի նա կայ՝ սահմանադրութիւնը անխախտ կը մնայ հայրենիքում, Բայց ահա ռուսական „Բիսմարքի“ մի անողորմ հարուածով օդը ցնդեցրեց կադէտների միամիտ յոյսերը, խօսեց ինքնակալի իրաւունքների մասին մի այնպիսի գոռող վճռականութեամբ, մի այնպիսի վէս ու պրօվօկատօրական տոնով, որ անգամ կադէտները սաստիկ յուզեցին և նրանց փայլուն շէֆ-հռետորը, Բօգիչէվ, որ թերևս ամենաանկեղծն է կադէտական շարքերում, առաջ սլացաւ կատաղութեամբ և մի կողմ նետելով ապարդիւն „պօլիտիկանութիւնը“, արտասանեց կառավարութեան ու մասնաւորապէս Ստօլիպինի դէմ մի շանթոտ ճառ, որից արիւնառուշտ „Բիսմարկը“ ասում են, դողաց իր նստած տեղում...

—„Ապագայ սերունդները կախաղանի պարան ասելով՝ կը հասկանան միշտ Ստօլիպինի արիւնոտ փողպատը...“ Այսպէս ասած Բօգիչէվ։

Տիրեց անհնարին ժխոր։ Տեղի ունեցաւ մի վայրենի տեսարան, որպիսին չէր եղած առաջներում։ Աջակողմը կատաղութեամբ և բռունցքներով գրոհ տուեց Բօգիչէվի դէմ և լուրջ դատաստան պիտի անէր, եթէ ձախակողմը չը շտապէր խլել իր հռետորին սև-հարիւրակեանների ճանկերից։ Այնուհետև—դարձեալ մի աներևոյթ։ Յայտնի չէ՝ Բօգիչէվն ինքը զգաստացաւ, թէ՞ նրա պօլիտիկան—խոհեմ ընկերները զգաստացրին նրան—քիչ յետոյ նա նորից ամբիոն բարձրացաւ և յայտարարեց, որ արդէն ներողութիւն է խնդրել Ստօլիպինից... „կատաղի վազը մինչև մարագ է լինում“.—այդպէս և կադէտական բէվօլիւցիօնարիզմը։

Այնուամենայնիւ հարուածը հասցրուած է Ստօլիպիններին, ռուսական բռնապետութիւնը գիտէ այժմ, որ նա բարոյապէս յենուած միմիայն մի 100 սև-հարիւրակեան պատգամաւորների վրայ, ընտրուած վերջին խայտառակ սիստէմով... Խղճո՞ւկ սփոփանք... Որքա՞ն կոյր ու բութ պիտի լինի մի կառավարութիւն, որ վստահանայ այդպիսի պայմաններում ձեռնոց նետել ամբողջ Ռուսաստանին և շարունակել իշխել սուիններով, բացառիկ օրէնքներով, զինուորական դատարաններով... Վախճան կա՞յ այդ զարհուրելի կացութեան...

Յեղափոխականի համար պատասխանը պարզ է և վճռական։ Վերջին ամսում գուցէ աւելի քան երբևիցէ յստակ պարզուեց ամեն մի շիտակ մտածողի համար, որ Ռուսաստանի փրկութիւնը կարող է ձեռք բերուել ոչ թէ կադէտների ու այլ պօլիտիկանների ջանքերով, որոնք անամօթ խաբեբայութեամբ հռչակում են հոկտեմբերեան մանիֆեստը, իբրև „արքայական մի շնորհ“ վախենում են նոյնիսկ „սահմանադրութիւն“ բառը յիշատակել ուղերձի մէջ, արհամարհելով այդպիսով ժողովրդական արեան գետերը, որոնք թափուած են յանուն այդ թանկագին նուաճումների,—ոչ, ամեն մի շիտակ քաղաքացի գիտակցում է այժմ, Ստօլիպինեան վերջին սպառնական յայտարարութիւնից յետոյ՝ որ փրկութիւնը դարձեալ այդ նոյն ժողովրդական ոյժի մէջն է, որ տեղի է տուել ժամանակաւորապէս, բայց որ լռելեայն կազմակերպւում է և վերստին յորձանք է տալու, գոռ ու յաղթական։ Ժողովուրդները վաղուց վարժուել են համբերութեան, Ռուսաստանի ազգաբնութիւնները շա՞տ են տառապել ու տոկացել—նրանք կը կարողանան էլի տոկալ, էլի սպասել։ Բռնապետութիւնը երկար ապրել անկարող է. իւրաքանչիւր օրը նոր ապացոյց է բերում այդ ճշմարտութեան։ Թէ օբ'եկտիվ—տարերային և թէ սուբ'եկտիվ—հասարակական ուժերը անդադրում գործի վրայ են, քանդելով ցարիզմի բոլոր հիմքերը։

Երկիրը իսպառ աւերուած է վերջին տարիների անիշխանութեան ու քաոսի շնորհիւ, սովը դարձել է մշտնջենաւոր։ Քաղաքական-ազգայնական ու տնտեսական երբեակ լուծը ծանրացած է Ռուսաստանի ահագին մեծամասնութեան վրայ, դժգոհ են ազգութիւնները, որոնք փոխանակ շատ թէ քիչ յարգելու իրենց իրաւունքների մէջ, միշտ աւելի և աւելի մատնւում են բացառիկ օրէնքների անիրաւութեան։ դժգոհ է ամեն տեղ պրոլետարիատը, դժգոհ է և վիթխարի գիւղացիութիւնը, որի փոքր ինչ կրաւորական դիրքը քաջալերել և համառուսական դահիճներին, բայց որի խորքում առաջ է տարուում պրոպագանդի ու կազմակերպման շինարար գործը, որ մի օր—ոչ հեռու ապագայում—շարժման մէջ կը դնէ այդ ահռելի զանգուածը իր արիւնարբու ոսոխների դէմ... Կախաղանները և մասսային գնդակահարումները չեն ցամաքեցնում հերոսութեան, անձնազոհութեան աղբիւրը, իւրաքանչիւր օր—տերօրական գործողութիւններ, մանր ու խոշոր դաւադրութիւններ։ Անգամ զօրքի մէջ, չը նայած վերջին երկու տարւայ ահռելի ճնշումներին, դարձեալ յաճախ տեղի են ունենում խլրտումներ ու բացարձակ ապստամբութիւններ (Օդեսայի ու Վլադիվոստոկի վերջին դէպքեր)։ կասկած չը կայ, որ ռուսական զօրաբանակներում ամենուրեք կատարուում է ազատարար խմորումն և զօրքի մի պատկառելի մասը կրթւում է յեղափոխական մտածողութեամբ։ Դժգոհ են բոլոր տարրերը, դժգոհ է և արտասահմանը... Ռուս բիւրօկրատիայի աչքկապութիւնները սահման ունին նոյնիսկ սիրալիր ու համբերատար եւրոպական բանկիրների համար։ Եւ մի օր, անտարակոյս, ֆինանսական Եւրոպան ևս կը յայտարարէ, որ մի կառավարութիւն, որը ապրում է պետական հարուածներով, պօգրոմներով ու ամենօրեայ մասսային գլխատումներով, որ շարունակ անորոշութեան մէջ է պահում իր բազմամիլիոն ազգաբնակութիւնը երկրի ամենամեծ, ամենակարդինալ հարցի վերաբերմամբ—սահմանադրութի՞ւն է տիրող կարգը, թէ՞ միահեծան բռնապետութիւն—մի այդպիսի կառավարութեան վարկը խախտուած է և նա չի կարող այլևս յոյս դնել արտասահմանեան փոխառութիւնների վրայ..

Դա կը լինի „սկիզբը վերջաւորութեան“։ Այդ եղեռական դիմադարձութեան նշանները տեսնում ենք արդէն դաշնակից-երկրում, որ ռուս բիւրօկրատիայի սովորական, լիառատ աղբիւրն է, որից նա գանձել է բազմաթիւ միլիարդներ...

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

(1820—1907)

Հայոց Հայրիկը վախճանեցաւ Նոյ. 9-ին պայքարի, երազներու և տարիներու բեռին տակ կորաքամակ և „վշտակիր“։ Հայ ժողովրդի պատմութեան մէջ եղակնորէն վճիտ և հոյակապ դէմք մըն է, որ կրցաւ իր հմայքով և անկեղծութիւնով ետևէն քալեցնել ամբողջ ժողովուրդի մը եռանդը, իղձը, յոյսերը և գիտակցութիւնը։

Եթէ կայ մէկը որ անաչառօրէն արժանի է „հասարակական գործիչ“ տիտղոսին, այդ պէտք է շնորհել Խրիմեան Հայրիկին, որուն կեանքը ամբողջովին ժողովրդանուէր վազք մը եղած է, և որ իր մէջ կը մարմնացնէր ժողովուրդի ոգին։ Ճիշդ է իրմէ առաջ եղած են ազգային գործիչներ, Օրիներ և այլն, որոնք գործած են մթութեան մէջ, թագուն ազգային ի ղ ձ ը իրագործելու համար, Հայրիկ, ուղղակի ժողովրդի ծոցէն ծլած, սրտի հզօր զգացումով մը, այդ իղձը ժողովրդականացուց, լայնցուց և դրաւ զայն ժողովուրդի ուսերուն վրայ և անոր սրտին մօտիկ։ Հայրիկ դիւանագիտական յուսախաբութիւններուն դէմ ստեղծեց ժողովրդեան տարերային ուժը, որուն փոթորկումներուն ապագային ականատես պիտի ըլլար ինքը։

Խրիմեանի մահով բարոյական մեծ փոթորկալից ոյժ մըն է որ կանհետանայ հայ ազգէն. անոր մէջ տիրող գիծը բողոքողի ըմբոստ ոգին է, որ սոսկումը ունի ստրկութեան և իմացականութիւնը ազատութեան։ Իր կրօնական ու գրական գործունէութիւնը փառաբանումն է ժողովուրդին անոր օգուտն ու բարօրութիւնը, „դրախտային“ վիճակ մը մարդկութեան որ բնութեան ծոցին մէջ ապրէր բարոյական և բնական օրէնքներու համաձայն։ Անոր հայրենասիրական յափշտակութեան և իր ժողովուրդը տածած լայն զգացումին մէջ կար իդէալ մը մարդկայնական և անոր աւետարանական վարդապետութեան ետևը կար բանապաշտ փիլիսոփայութիւն մը, բանաստեղծական լուսապակով մը։ Եւ այդ պէտք է վերագրել այն գեղեցիկ միջավայրին՝ կարկառուն և այլազան, ուր վիրգիլեան կեանքը ապրած էր։ Եթէ Հայրիկի գործերէն նշանաբան մը հանել ուզենք, կարելի է ամփոփել սա երկու պարզ և տիեզերական խօսքին մէջ՝ „Լոյս և աշխատութիւն“։

Հայրիկի կեանքը կարելի է բաժնել երեք շրջանի։ Առաջին շրջանին մէջ ան կապրի հայրենի հողին գիրկը, ինչպէս gnome մը, կը նոյնանայ միջավայրին հետ և կը կազմի ապագայ հերոսը։ Կապրի հողին հինհին յիշատակները, անոր ողբերգական վեհութիւնը և գեղեցկութիւնը։

„Զօդ ծծեալ Հայաստանեայց՝ ոյս զգացի զոգի նախնեացն“

Իր զգայուն էութիւնը կը լեցնի, կելեքտրականանայ անով. բնութիւնը, սարերը ու ձորերը կը դաստիարակեն զայն, կօրօրեն անոր երազները... „մեռելներն են որ կը խօսին“։

Բնութեան վեհաշուք շրջանակին մէջ, ուր պատմական շշուկները և արձագանքները իր հոգին կը զարդարեն, Հայրիկ ականատես կըլլայ դաժան և աւերիչ բէժիմի սարսափներուն, հայ ժողովրդի տառապանքներուն, ստրկութեան. անոր կորովի և չարքաշ համբերատարութեան. անոր վէրքերը կը շօշափէ, անոր դանգատները մտիկ կընէ, անոր լուռ իղձերը կը կռահէ, կը կրէ այդ կեանքը և սրտաբաց ու ճակատաբաց կը քալէ թշառութեան արահետներէն, կը դիտէ, կը զգայ և երկունքի մտածումները կը համբարէ իր ճակտին ետև։

Հայաստանի որբ յիշատակներուն վրայ անճանաչ և լքուած, գլխիկոր և սգաւոր որբ հայ ժողովուրդ մը կապրէր, Հայրիկ կը մտաբերէ ճիգը ըլլալ՝ հայ ժողովուրդը ճանչցնելու... հայութեան։

Երկրորդ շրջանին մէջ Հայրիկ երկրէն դուրս կելլէ իբր „հրաւիրակ Արարատեան“, կերթայ Պոլիս ուր „հայրենասէրի“ համբաւը կը հանէ։ Այդ ժամանակամիջոցին Հայրիկի դերը մեծ եղած է։ Հայաստանի այդ վարժապետը գիտակ ըրաւ Պոլսոյ մտաւորականութիւնը—որ յետոյ մեծ դեր խաղաց հայ քաղաքական պատմութեան մէջ—հայ ժողովրդի կեանքին, անոր քաղաքական, տնտեսական և մտաւորական տխուր պայմաններուն։ Պոլսեցիներուն ճանչցուց և սիրցուց Հայաստանը, որու մասին աւիւնով և յափշտակութիւնով կը խօսէր։ Ինքը սիստէմ մը, բանաձև չը ներկայացուց, այլ երկրին խորին ճանաչութիւնը, անոր վիշտը և այրի գեղեցկութիւնը։ Հայրիկի օրէն կսկսի Պոլսոյ կենդանի և գործօն հետաքրքրութիւնը դէպի մոռացած, և հեծող հայ ժողովուրդը որ հայրենի ստրուշանին քով կը հսկէր, դարերու տառապանքովը նուիրականացած։ Սոյն շրջանին մէջ է որ Հայրիկ, զարմանալի յանդգնութիւնով մը ուղղակի երկրին մէջ, Հայաստանի սրտին վրայ կը հիմնէ մամուլը դպրոց և առաջին հայ հանդէսը։ Այդ ատեն՝

„Անսանման յոյսի սարսուռ մի անցաւ երկրին վրայէն“

Վարագայ սարը ուր շղթայուած էր այդ հաւատքի գործիչը կուզէր լուսաւորութեան փարոս մ'ընել. երբ մգլած աբեղաներ և մռայլ տգիտութիւնը կայպանէին զինքը ըսելով մամուլին համար. „ի՞նչ այս երկաթին կտորները առիր բերիր մեզի“։

Այդ շրջանը վարդապետին երիտասարդ տարիներն են, լի յուզմունքով, եռանդով և աւիւնով։ Իր գրականութիւնը հարազատութիւնով՝ և գործնական փիլիսոփայութիւնով և պայծառութիւնով շող շողուն, ինչպէս իր ծծած օդը, զուտ ազգային է որ կը բխի զինքը շրջապատող պայմաններէն կամ համամարդկային գաղափար մը, որ ջանայ կիրարկել հայ կեանքին. ան կը քարոզէ մարդկային տարրական սկզբունքը „ինքնապաշտպանութիւնը“ կամայականութիւններուն, աւազակութիւններուն և հարստահարութիւններուն դէմ։ Կուսակրօնութիւնը որուն հովանիին տակ մտած էր—իր կինը և դուստրը մեռնել է յետոյ—մեկնեց բանապաշտ ոգով, երբէք չուզեց ընդունիլ թէ „սուր առնողը սուրով կիյնայ“։

Իր գրականութիւնը կոչ մըն է աշխատութեան, կըրթութեան, ինքնաճանաչութեան, և ամէն անգամ երբ այդ տարօրինակ դէմքը փետուրը ձեռք կառնէ, իր աչքերուն առջև կը տեսարանուին ամբողջ հայ աշխատաւոր ժողովուրդը, որ դաստակները բացած կեանք և կենդանութիւն կուտայ հայ աշխարհին և անմիջապէս յետոյ ահաւոր հակադրութիւնը—բարբարոսութիւնը, զուլումը որ իր սև ու աշխարհաւեր փոթորիկը կանցնէ անոր վրայէն։ Հայրիկ յառաջադիմասէր միտքն է, նորութեան սիրահար, միշտ պահելով իդէալի և կեանքի համեմատական ըմբռնումը և ներդաշնակութիւնը, „մարդ եղիք, կրթուեցէք, լուսաւորեցէք և քաջ եղէք“ այս եղած է իր հայրական հաւատքը, խրախոյսը և յորդորը հայ ժողովրդին։

Ազգային գիտակցութիւնը կարևծագի, ըմբոստութիւնը թոթովումներ ունի, Հայրիկ կը մտրակէ ցեղին մէջ մարդկային արժանապատուութիւնը և առնութիւնը, և կը հրէ զայն պատմութեան յորձանքին մէջ։ Իր ձայնը արձագանք կը գտնէ ամբողջ Հայութեան մէջ, և միւս կողմէն կը շեշտուի իր մէջ կոչումին գիտակցութիւնը, սէրը և պաշտամունքը բնիկ հողին և տառապող ժողովուրդին։

Երրորդ շրջանը վարչական-քաղաքական շրջանն է, երբ կը կոչուի պատրիարքութեան և ուղղակի ճակատ-ճակատի կուգայ կառավարութեան հետ։ Իր բարձր պաշտօնին բերումով, հայ ժողովրդի ցաւը անպատրաստակ կը ներկայացնէ Դրան, կողոքէ զայն Հայաստանի հարստահարութեանց „թագրիրներով“ և վերիվայր կը շրջէ ազգին և կառավարութեան անգոյն և անիմաստ յարաբերութիւնները և ցայտունութիւն կուտայ անոր։ Հայրիկ պետութեան նենգամիտ և հայաջինջ քաղաքականութեան առջև անվեհերօրէն կը դնէ, հայ ժողովրդի բողոքը, արդար պահանջները, և անոր գիտակցութիւնը։ Կառավարական չկամութիւնը, թագրիրներու անհետևանք մնալը, որոնք արիւնոտ փաստերու վրայ հիմնուած էին, լայնցուցին հայ ժողովուրդի և թիւրք կառավարութեան միջև անջրպետը։ Հայ ազգը քաղաքական ճակատամարտ մը կը մղէ մնալով պետական օրէնքներու և իրաւունքներու սահմանին մէջ, և հիմնուելով հայ ժողովրդի օրինապահ, զգացումներուն վրայ։ Ոչինչ չզլրեց և ոչինչ նախատեսել չտուաւ ապիկար և աւազակաբարոյ կառավարութեան ինչ որ կարող էր առաջ գալ այդպիսի մշտնջենական և նպատակաւոր հարստահարութիւններէ։ Կառավարութիւնը սոսկաց, ինքզինք գտնելով անձնաւորութեան մը առջև որուն անվեհեր ձայնին մէջ կը լսէր և ամբողջ ժողովրդի մը արդար և խուլ զայրոյթը, ուստի ամէն ջանք ըրաւ և տապալեց Հայրիկի պատրիարքութիւնը։ Սակայն այդ պատրիարքութեան օրով, ստեղծուած էր սերունդ մը, որ համակուած էր ժողովրդական պատրիարքին խորհուրդներովը և ձգտումներովը։ Խմորումը արդէն սկըսած էր և երկչոտ մտքերը սիրտ առած էին։

Պատրիարքութենէն հրաժարուելէն յետոյ Աբիլէսի պէս իր վրանը չքաշուեցաւ ժողովրդի պաշտպանը այլ արտադրեց գրական երկեր պարզ, կրթիչ և աշխարհիկ ոգով. եկեղեցիի բեմերէն քարոզեց իբրև ժողովրդի տրիբուն, որուն խօսքերը արևելեան ձևով սրամիտ առակներով, այլաբանութիւններով և պատրաստամիտ հեգնութիւնով ուժեղացած և իմաստնացած, չեն ալեկոծեր այլ զգայուն ծիծաղը կը շարժեն, կը թափանցեն և հանդարտ ուժականութիւնը կը մթերեն ժողովրդի հոգիին մէջ։

Հայ ժողովրդի հարազատ թարգմանը ըլլալով և անոր իրաւունքներուն անվեհեր ախոյեանը թիւրք պետութեան և աշխարհի առջև, Հայրիկ օրարևի մէջ դրաւ հայ ազգին էութիւնը և իր գործունէութիւնը ճակատագրօրէն և տրամաբանօրէն յանգեցաւ Պերլինի դաշնագրութեան։ Ուր հայկական հարցը պաշտօնապէս միջազգային դրօշմը ստացաւ։ Հայրիկ Պերլինի վեհաժողովին տարաւ հայ ժողովրդի դառն և խորունկ ցաւերը, իղձերը, արդարութիւն պահանջելով քաղաքակիրթ աշխարհէն։ Հայրիկ այդ օրէն ըմբռնեց նաև որ ազատագրութեան հարցերուն, կամ ազգերու յարաբերութիւններուն մէջ պէտք է պողովատել արդարութեան և իրաւունքի ձայնը։

Հայրիկի մեծ և ազնիւ գործերէն մէկն է—որ պատիւ կը բերէ հայ ցեղին—նաև այն պարագան երբ ներսէս պատրիարք „Սովելոց Յանձնաժողովի“ կողմէն զինքը ղրկեց Վան ամբողջ ժողովուրդ մը սովամահ ըլլալէ փրկելու համար։ Հայրիկ մարդասիրական հիանալի ոգով բոլոր սովատանջ ազգութիւններուն անխտիր հաց ու ալիւր բաշխելով ցոյց տուաւ գաղափարի լայն հայեացք դէպի ազգերու եղբայրութիւնը, և խաղաղութիւնը, ինչպէս ցոյց տուաւ կրօնի ազատամտութիւնը դէպի բոլոր հայերը։

Հայրիկի Երուսաղէմ աքսորի և կաթողիկոսութեան միջոցին, տաճկահայ դատը եռուն և հրատապ շրջանի մը մէջ մտած է։ Հայրիկի յիսուն տարի ցանած սերմերը կ'արգասաւորին, և հայ ինքնաճանաչութիւնը կը թեւաւորի և անդիմադրելի հոսանքն է որ կստեղծուի։ Հին արծիւը, Էջմիածնի վեհարանին մէջ կաշկանդ, չկրնար այլևս թափահարել իր թեւերու ուժգնութիւնը։

Իր վերջի տարիներուն մեծ ծերունին ալևոր Արարատի դիմաց, իր հսկայ այլ ընկճուած հասակով կանգուն, ճիշդ է, չէր լսեր այլևս սայլերու ձայները գերութեան շղթաները ամրապնդող, բայց ականատես եղաւ „արևելեան քրիստոնեաներու պաշտպան“ ցարերու աներևակայելի եղեռնագործութիւններուն դէպի հայ ժողովուրդը.—հալածանք դպրոցներու դէմ, բռնի գրաւում ազգային կալուածներու և... դաւաճան քաջալերութիւն Մեծ Մարդասպանին։ Այո, հսկայ ծերունին այս ամէն աղէտներուն կայծակնիլը տեսաւ հայ ժողովրդի գլխին. որուն զարթնումին յիսունամեայ անխոնջ և բոլորանուէր մշակն էր եղած և որ Հայաստանի սգոտ դաշտերուն վրայ Եղեկիէլի տեսիլքը պտտցուցած էր։

Վերջին անգամ մ'ալ, „մուռացութեան երկրին մէջ“ Հայաստանի արծիւը բողոքի սուր ճիչը արձակեց ռուսական գիշակեր արծիւի երեսին, և հզօր ու հպարտ մխիթարութիւնը զգաց տեսնելով ցեղին ազնիւ ու հոյակապ զգացումի զարթնումը և բռնկումը պատնէշին վրայ, ուր հայ ժողովուրդը հիանալի „ինքնապաշտպանութիւնը“ կատարեց։

Ծերունի Հայրապետը՝ սուգին մէջ շիջանելէ առաջ, վերջին սփոփանքը ունեցաւ իր ժողովրդի արիական արարքը տեսնելով, բայց ոչ նուազ ազդեցին նաև անոր

հոգիին վրայ այդ արիւնահեղութիւնները, որով դաւաճան ձեռքեր ցեղային ատելութիւնները կը հրահրէին։ Հայրիկ խաղաղութեան, սիրոյ և եղբայրութեան մարդն էր։

Հայրիկի կեանքը անմահօրէն կապուած է մեր ազգին նոր պատմութեան հետ, որուն տաւ կեանք և հոգի և ստեղծեց հոսանքը որ կը դիմեր դէպի ապագան։ Իր լեցուն կենսագրութիւնը գրել, ըսել է հայ ժողովրդի ժամանակակից պատմութիւնը գրել, ոչ մէկ դէմք այդքան շքեղ և այդքան լայն ժողովրդական համակրանքի չէ արժանացած մեր մէջ. իզուր չէր որ հայ ժողովուրդը երախտագիտօրէն անոր տուաւ „Հայրիկ“ համեստ անունը, որ ցեղի մը զգացումը կը խորհրդանիշէ։

Իր կեանքի վերջալոյսին՝ հայ ժողովրդի ահաւոր դժբախտութեան, սովին և խելայեղ գաղթին՝ որուն դէմ այնքան մաքառած էր, և հոյակապ կորովի ընդվզումին ականատես, Հայոց Հայրիկը յիշեց այն օրը երբ Վարագայ կատարին վրայ մամուլը կը հիմնէր, լոյս սրսկելու դրախտի երկրին մէջ և հրաշակերտելու հայ ժողովուրդը, ինքը ըլլալով շղթայուած Պրոմէթէոսը և... արծիւը միանգամայն։

ԳԱՂԹԻ ՈՃԻՐԸ

—

„Մեր իրաւունքները ոտնահարուած են մի քանի անիրաւ պաշտօնեաների կողմից։ Մեր ներկայ վալին, Ալի-Բէյը, ըսկսում է դործադրել իր ծրագիրը անօրինակ խստասրտութեամբ։ Մեզնից պա՛հանջում են տուրքեր, որ մենք վճարել ենք արդէն 20 տարի սրանից առաջ։ Հարկահանը գոռում է. „Տո՛ւր և ոչ մի խօսք“։ Մեր սիրելի հայրենիքը ենթակայ է մեծ վտանգի, շնորհիւ անիրաւ պաշտօնեաների։ Սովը սպառնում է մեզ... Երեխաները „հայ են աղաղակում, մայրը մի կտոր հաց չունի նրանց տալու։ Մեր կառավարիչները մեր թշուառութեան մասին չեն մտածում, այլ միայն մտածում են իրենց սեփական բարօրութեան մասին... Ժողովուրդը գոռում է, „Մեր կեանքը դժոխք է, որի մէջ այրում, խորովւում ենք. բայց մենք չենք յուսահատուում, որ մի օր կը տեսնենք մեր դաղան կառավարիչների պատիժը“...

Այսպէս է խօսում Էրզրումի սովալուկ տաճիկների մի հեռագիրը, ղրկուած Բ. Դրան։ Դրա հետ համաբեա զուգադիպում է մի այլ հեռագիր, տրուած Կ. Պոլսից եւրոպական խոշոր թերթերին.

„Էրզրումի ազգաբնակութիւնը յայտարալել է, որ պիտի ընդդիմանայ նոր կառավարիչ Ռ.բդիւլ Վեհաբ փաշայի գալուն. իսկ Փոքր-Ասիայից տեղացող լուրերը հաստատում են, որ գրգռումն և խռովութիւնները աճում են Վանի ու Բիթլիսի Վիլայէթներում, օրինակ առնելով Էրզրումի շարժումներից, բայց աւելի կատաղի և աւելի անհանգստացրնող բնաւորութեամբ“։

Նման բազմաթիւ հեռագիրներ և թղթակցութիւններ։ Եւ դրանց հետ միաժամանակ հնչում է այդ տարաբախտ վայրերից մի ուրիշ յուսահատական ճիչ, նոյնպէս անտանելի կացութեան մի ճիչ, սակայն մի անախորժ դիսօնանս է կազմում, մի տխրալի աններդաշնակութիւն՝ առաջիններին հետ։ Դա գաղթի հաւա՞ն է, որ նորից հնչում է հայկական բարձրավանդակից, արձանագրւում է եւրոպական մամուլի մէջ նոյն սառցային անտարբերութեամբ և լցնում է մեր սրտերը տխրութեամբ և ցասումով...

„Հայերը գաղթում են խմբովին, հազարներով, դաղթում են դէպի Կովկաս“—ահա լակոնական հեռագիրը։ Անմխիթար ու այլանդակ մի իրողութիւն, որ հաւասար է ոճրի։ Նրան կարելի է բացատրել, բայց երբէք արդարացնել։ Նրան կարելի է հասկանալ, իբրև մի նօրմալ պատուհաս, որ ծնունդ է տիրող արհաւիրքների, սովի ու բռնակալութեան, բայց նա դարձեալ մնում է ոճիր, մանաւանդ ներկայ հանգամանքներում, երբ դժգոհութեան ու ըմբոստացման մի հոդմ է անցնում ամբողջ Օսմանեան կայսրութեան վրայից, որ ազդարարում է մօտալուտ արշալոյսը բոլոր ժողովուրդների ազատագրութեան։ Բոլոր ժողովուրդները հայի վախանում արթնանում են, ձգտում դէպի լոյս, իսկ հայը փախչում է իր այդ վախանից։ Հեռագիրները ամեն օր աւետում են տաճկի, քրդի և այլ ցեղերի տարերային խլրտումների մասին, կայսրութեան բոլոր ծայրերում, աւետում են և համերաշխութեան քայլերի մասին՝ մահմեդականների ու քրիստոնեաների մէջ։ Աբդիւլ Համիդի եռանդուն ջանքերով, թալանի ու սովի քաղաքականութեամբ ստեղծել է այսօր վաղո՛ւց փափագած դրութիւնը, ուր երեկայ հակառակորդները—հայ ու մահմեդական—մօտենում են և կապւում դաղափարական գործակցութեան սերտ կապերով, յանուն ընդհանուր ազատագրութեան... իսկ հայը փախչում է իր վախանից...

Տասն և հինդ տարի է, ինչ ծանրացած են դրակոնական, բացառիկ օրէնքները հայ աշխատաւոր ընդհանրութեան վրայ, տասն և հինդ տարի է, ինչ աւերածի ու ջարդի հողմը ճարակում է մեր դժբախտ երկիրը, հազար հազարաւոր զոհեր է տուել նա, արցունքի գետեր, մարդկային հրեշաւոր հեկատօմբներ,—մի անծայրածիր ու սրտաճմլիկ նահատակութիւն... և դարձեալ նա դիմացել է, դարձեալ ցաւի ու տառապանքի ժխորի միջից հնչեցրել է նա ըմբոստութեան դոռ որոտումներ, դարձեալ անվկանդ տոկունութեամբ ձգտել է նա խորտակել իրեն կաշկանդող շղթաները... Իսկ այսօր, երբ հօրիզոնը սկսում է պարզւել, երբ մահմեդական տարուին անդամ սթափւում է իր դաբաւոր, անպատիւ մրափից, երբ նա եղբայրական ձեռք է մեկնում իր քրիստոնեայ հարևանին և տեղ-տեղ արդէն նրա հետ միասին ոտք է կոխում կռւի արիւնոտ ճանապարհի վրայ, երբ այդպիսով յոյսի մի հզօր ճառագայթ է անցնում ամբողջ Տաճկաստանի վրայից և համիդականութեան օրերն արդէն հաշուած են երևում—այսօր հայ աշխատաւորը, հայ գիւղացին, դաւաճանօրէն լքնում է իր երկիրը և փախչում դէպի օտար հօրիզոններ...

Ո՞ւր բարով, դժբախտ եղբայրներ... Ի՞նչ է սպասում ձեզ օտարութեան մէջ, թէկուզ ցեղակից միջավայրում։ Ի՞նչ շահեցին այնտեղ ձեր նախորդները... Կիսապրօլետար, վարձաբօնային, մուրացիկ մի կեանք—ահա գաղթի անխուսափելի հեռանկարը։ Անհող, անտուն, թափառական մի գոյութիւն, կառավարական հալածանքներ, նիւթական մրշանջենաւոր անապահովութիւն, յաճախ բարոյական այլասերում։ Հազար անդամ աւելի պատուաբեր է մնալ սեփական հայրենիքում, և ստուարացնել կուռողների բանակը։ Այնտեղ հայրենիքում, պայմանները խիստ ծանր են, բայց դժգոհութիւնն էլ ընդհանուր է—ամբողջ բազմացեղ ազգաբնակութեան համար։ Այդ դժգոհութիւնը մղում է մուսուլման ժողովրդին՝ անսովոր, ցասկոտ կոչեր ուղղել Եըլդիզի ճիւաղին, այդ դժգոհութիւնը ոտքի է հանում նոյն մուսուլման ժողովրդին, նոյն իսկ հաւատացեալ զինուորներին՝ իրենց մեծերի, հրամանատարների դէմ։ Ոչ մի տարակոյս՝ որ յայնաժամեալ կայսրութիւնը երկունքի մէջ է և նրա բարեյաջող ազատագրումը պահանջում է բոլոր տարրերի ջերմ ու դործօն մասնակցութիւն։ Մինչև օրս մենակ էինք կռւի դաշտում, մեկուսացած ու հալածուած չորս կողմերից։ Զը հասկցուած, չը գնահատուած ոչ ոքից։ Այժմ ստեղծուել են կռւի համար այնքա՞ն նպաստաւոր պայմաններ, այժմ այնքա՞ն բազմապատկուել են յաղթանակի շանսերը, սկիզբն է առել և արդէն իսկ դլուխ է բարձրացնում այն ահեղ ու արդասաւոր Ոյժը, որ կոչւում է „ըմբոստ տարրերի Միութիւն“... Պէտք է յարատև ոյժ ներշնչել այդ միութեան. հայ ժողովուրդը՝ այժմ աւելի քան երբևիցէ, վստահ ու զարթ՝ պիտի մնայ կռւի դաշտում, պիտի միանայ իր բաս-

տակից մահմեդականներին եթէ չէ ուզում դաւաճանել իր կենսական շահերին և իր պատմական առաքելութեան։

ԲՕՐԻՍ ՍԱՐԱՖՕՎ

„Դրօշակի“ խմբագրութիւնը, նոյ. 12-ին ստացաւ հետեւեալ խիստ տխուր եւ անակնկալ հեռագիրը. մակեդոնական միտինգ կազմակերպութեան կողմէ,

„Սարաֆօվ և Կարվանօվ սպանուած“։

Խմբագրութիւնս այդ դուժը առնելուն՝ նոյն օրը հեռագրեց մակեդոնական կոմիտէին

„Մեր ընկերներուն սպանութեան լուրը սարսափելի է։ Սուգը մեծ է և կորուստը անողորմ թէ ձեզի և թէ մեզի համար։ Հայ ժողովուրդը կը վշտակցի այն մեծ սուգին որ կը հարուածէ քաջարի մակեդոնական ժողովուրդը որ կը կորսնցնէ իր երկու սիրելի զաւակները և մակեդոնական Յեղափոխութիւնը երկու փառաւոր հերոսներ։ Անոնց անունները անմահ պիտի մնան Մակեդոնիոյ ազատագրութեան պատմութեան մէջ՝ որուն նուիրեցին իրենց կեանքը և կորովը, միշտ բարձր բռնելով Յեղափոխութեան Դրօշակը։ Յանուն Հ. Յ. Դաշնակցութեան, ընկերներ, կը յայտնենք մեր խորին վիշտը և ցաւակցութիւնը։

—

Խմբագրութիւնս հետեւեալը հեռագրեց նաև Բօրիսի հօրը,

„Կը վշտակցինք ձեր խորին սուգին և ձեզի կը յայտնենք մեր ցաւակցական համակցութիւնը, մեր ընկերոջ Բօրիսի մահուան առթիւ, որուն անունը սիրելի պիտի մնայ մակեդոնական և հայ ժողովուրդներուն“։

Մակեդոնական ներքին կազմակերպութեան կողմէ խմբագրութիւնս ստացաւ հետեւեալ հեռագիր-պատասխանը։

„Ձեր մասնակցութիւնը մեզ հարուածող մեծ սուգին մխիթարութիւն մըն է մեզի համար։ Մեր սրտագին շնորհակալութիւնները“։

***

Ահա դուժկան հեռագիրը, ուղղուած մեր խմբագրութեանը՝ Սարաֆօվի ընկերների կողմից։

Ուզում էք չը հաւատալ, ուզում էք թիւրիմացութիւն, առասպել համարել... Ցաւագին անակնկալները, եղերական պատահարների անողորմ լուրերը, սիրելի մարդկանց յանկարծակի կորուստը յաճախ այնպէս են շշմեցնում ձեզ, որ երկար ժամանակ պայքարում էք կատարուած փաստի հնարաւորութեան դէմ։ Իսկ այստեղ փաստը այնքա՜ն հրեշաւոր է, այնքա՜ն անհեթեթ ու առեղծուածային։ Բօրիս Սարաֆօվը՝ սպանուած—ոչ թէ Մակեդոնիայի ձորերում, ոչ թէ կռուի արիւնոտ դաշտում, այլ... Բուլգարիայի ազատ, ապահով մայրաքաղաքում... Այն մարդը, որ բազմաթիւ ու յաղթական ճակատամարտներ է մղել սուլթանական զօրաբանակների դէմ, որ երկար ժամանակ իբրև դաւադիր, իբրև յեղափոխական պրօպագանդիստ, չափչփել է Մակեդոնիայի լեռներն ու ձորերը, նա որ քանի անգամ ճողոպրել է թիւրքական ծուղակներից ու գնդակներից, քանի՜ անգամ հրաշքով անհետացել է, թշնամու ստուար շարքերը պատռելով—այդ մարդը՝ սպանուած մի նամարդ գնդակից՝ իր տան իսկ շէմքում... Մի՞թէ հնարաւոր է... Մի՞թէ տաճիկ-բռնակալական դաւադրութեան թելը հասաւ մինչև Սօֆիա։ Մի՞թէ՝ աւստրիական կամ ռուսական ագենտների շահատակութիւնները խիզախեցին վերցնել ասպարէզից այն ահարկու հերոսին, որ Բալկանեան թերակղզու վրայ իր արիւնակից բուլգարականութեան շահերն էր հոգում, հոչակելով հանդերձ „Մակեդոնիան մակեդոնացիներին“ նշանաբանը, այն հերոսին՝ որ իր յաւիտենական դաւերով, իր դարիբալդիական թռիչքներով ատելի էր դարձել ռուս ու աւստրիական quasi—„խաղաղարար“ բռնաւորներին... Մի՞թէ, վերջապէս, կուսակցական թայֆայականութիւնը այնքան այլասերուեց, այնպէս խելագարուեց իր նախանձոտ կուրութեան մէջ, որ վստահացաւ ձեռք բարձրացնել աշխարհահռչակ ռազմիկի վրայ, որի անունով երդւում է այսօր, բուլգար ու մակեդոն երիտասարդութեան մի ստուար մասը, որի անունը դող է պատճառում և Եըլդըզ-Քեօսկի կամարիլային...

Եըլդըզի կամարի՛լլան... Ահա թէ ով է հրճւում այսօր ամենից աւելի՝ Սօֆիայում կատարուած աղէտի առթիւ... „Շէֆերը գնում են և յեղափոխական բանակները՝ որբանում—այսուհետև դժուար չի լինի խորտակել նրանց“—այսպէս են անշուշտ, տրամաբանում հայ ու մակեդոնական շարժումների ոխերիմ թշնամիները։ Մօտ երեք տարի սրբանից առաջ „Դաշնակցութեան“ պարագլուխն էր թաղուում բոլղարական մայրաքաղաքում, նա որ յղացել ու կազմակերպել էր ամենահոյակապ դաւադրութիւնը սուլթանական կեանքի դէմ և որ մեռաւ հէնց չարաղէտ պատրաստութիւնների միջոցին... Իսկ այսօր նոյն Սօֆիայում, նոյն սառը անտարբեր հողի տակ, դուցէ Քրիստաֆորի հարևանութեամբ, պառկում է Բօրիս Սարաֆօվ... Ճակատագրի անգո՛ւթ տնօրինութիւն... Երկու շէֆերը ինչպէ՞ս սրտանց սիրել էին իրար, առաջին հանդիպումից իսկ, ինչպէ՞ս յաճախ փայփայել էին իրենց ապագայ ծրագիրները, իրենց դաւադրական ձեռնարկները ընդհանուր անարդ թշնամու դէմ, յանուն ընդհանուր ազատագրութեան... Ո՞ւհ, անողորմ պատահարներ։

*

Բօրիս Սարաֆօվ առաջնակարգ տեղ կը բռնէ Բալկանեան արիւնալի դիւցազներդութեան մէջ։ Իր յեղափոխական գործունէութիւնը սկսել է նա շատ երիտասարդ, ընդամենը 20 տարեկան հասակում։ Քսան տարեկան էր նա 1895-ին, երբ մակեդոնական շարժումը սկսուելուն պէս՝ իբրև փորձուած խմբապետ, զինուորական դպրոցում մարզուած, առաւ իր հրամանատարութեան տակ ութսունի չափ կամաւորներ, անցաւ բուլգարական սահմանը, անթիւ արկածներով ներս թափանցեց Մակեդոնիայի լեռները և յարձակուեց Սէլինիքի թիւրք փոստային հիմնարկութեան վրայ, ձերբակալեց պաշտօնեաներին ու կրակ տուեց հիմնարկութիւնը։ Տաճիկ զօրքը, թուով 100 մարդ անկարող եղաւ դիմադրելու հայդուկներին։ Այդ քայլը արդէն որոշեց հերոսի կարիերը։ Դէպքը ահագին տպաւորութիւն գործեց Բուլկարիայում, և երբ Սարաֆօվ վերադարձաւ Սօֆիա, երիտասարդութիւնը և մանաւանդ մակեդոնացիք, դիմաւորեցին նրան խանդավառութեամբ ու ովսաննաներով։ Նորից մտաւ Սարաֆօվը զինուորական ծառայութեան մէջ, աւելի և աւելի կատարելագործուելու նպատակով. նա արդէն զգում էր, որ կոչուած է մի հսկայական առաքելութեան համար։ 1898-ին թէ 99, մակեդոնացի յեղափոխականների Ընդհանուր ժողովը որոշում է կազմել Սօֆիայում Բարբ-

ձրագոյն Կոմիտէ՝ շարժումը ղեկավարելու համար։ Կոմիտէն կազմում են Դավիդով, Կովաչեվ և Սարաֆով,—Վերջինս իբրև նախագահ։ Անշուշտ, կայանի ապահովութիւնը և հարազատ կառավարութեան ոչ շատ նեղիչ ընթացքը սկզբներում հեշտացնում է պրոպագանդի գործը։ Այնուամենայնիւ, մակեդոնական բուլգարները իրենց յեղափոխական առաջընթացութեան մէջ ահագին խոչընդոտներ ունէին յաղթահարելու, մանաւանդ ի դէմս յոյների, սերբերի և ուրիշ այլացեղ տարրերի, որոնցից իւրաքանչիւրը իր անսահման յաւակնութիւններն ունի Մակեդոնիայի վրայ և որոնք անհաշտ հակառակորդ են բուլգարական պրոպագանդի։

Սարաֆովի հռչակն աճում էր հետզհետէ։ Բարձրագոյն Կոմիտէն հիմնելուց յետոյ նա ծաւալեց մի անսովոր եռանդ, դարձաւ մակեդոնական շարժման հոգին։ Նա անդադար թափառումների մէջ էր, պտտում էր յաճախ Մակեդոնիայում, կազմակերպում էր մարտական խմբեր, քարոզում էր, քաջալերում, դէպի գործ հրում։

Կազմակերպութիւնը ուժեղանում էր օրըստօրէ, արմատներ ձգում թէ Մակեդոնիայում, թէ Բուլգարիայում և ի վերջոյ նա դարձաւ այն մեծ, պատկառելի ոյժը, որ խրոխտեց դիւանագիտական անդորրութիւնը և մի բոպէ նոյնիսկ սպառնաց միջազգային խաղաղութեան... Մի անգամ՝ 1902-ին, միւս անգամ՝ 1903-ի գարնանը։

Դա Սարաֆովի փառքի գագաթնակէտն էր... 1903-ի սարսափելի և անմոռանալի օրերն էին, բուլգարական Գարիբալդին իր համեմատաբար փոքրաթիւ կորիւններով հերոսական էր ձգել Մակեդոնիայում. զինուած խմբերը արշաւում էին աջ ու ձախ, շանթահարելով թշնամուն, մահ ու աւերած սփռելով ամենուրեք։ Ապստամբական մարտախմբերը դուրս էին գալիս ինքնաբերաբար, ասես գետնի տակից՝ Սարաֆովի մի կոչի վրայ, մի ժեստի վրայ։ Ընդհանուր ապստամբութիւն էր Մակեդոնիայում։ Սալոնիկը այրւում էր բառացի կերպով, այնտեղ Բօրիսի վարպետ ընկերները դիւային հնարագիտութեամբ կազմակերպել էին մի երկար շարք դժոխային ձեռնարկների, որոնց հոգին աշխարհաւեր ուժանակն էր։ Բանկերը օդն էին ցնդում նրան ահարկու ճայթուններից, երկաթուղային կամուրջները փլում էին դժոխային մեքենաների հարուածներից, ռումբները անդադար թռչում էին օդի մէջ, ոչնչացնելով բազմաթիւ կեանքեր և պաշտօնական հիմնարկութիւններ... Այն ինչ՝ Սարաֆով Մոնաստիրի վիլայէթում իբրև իսկական զօրապետ, ղեկավարում էր ապստամբութիւնը, անձամբ մասնակցելով պատերազմին, շարունակ աջ ու ձախ թռչկոտելով ու սիրտ տալով։ Չափազա՞նց անհաւասար մի պատերազմ, ուր, սակայն, Ռիւշդի փաշան, տաճիկ ահագին զօրաբանակի հրամանը, եւրոպական մամուլի յիշատակութեամբ, կորցրեց ոչ պակաս, քան 600 մարդ։

Դիւանագիտական մթնոլորտը փոթորկւել էր արդէն մակեդոնական բէֆորմները դարձել էին օրւայ խնդիր, երբ Բօրիսը անհնարին զրկանքների ու արկածների ճանապարհով հասաւ վերստին Սոֆիա... Ոգևորութիւնն աննկարագրելի էր։ Տասնեակ հազարաւոր մի բազմութիւն շրջապատեց նրան երկաթուղու կայարանում և ապա սկսուեց յաղթական թափօր, Բօրիսին տարան ուսերի վրայ, երաժշտութեան, ազգային հիմնի ուղեկցութեամբ և խելագար կեցցէներով, ովսաննաներով. ծածանւում էին դրօշակները, կանայք ու աղջկերք նետում էին հերոսի վրայ ծաղիկ փնջեր, դափնեայ պսակներ... Մի կատարեալ ապօթէօզ էր դա, մի առուածացում, որին արժանանում էր Սարաֆովը բովանդակ ազգաբնակութեան կողմից։ Ցուն է գալիս,—այժմ էլ եւրոպական թղթակիցներն են պաշարում նրան համաշխարհային մամուլը արձանագրում է Սարաֆովի Ոդիսէան, նրա արկածալի թափառումները, նրա հերոսական ճակատամարտները։ Քիչ յետոյ նա ինքը Եւրոպա էր իր ընկեր ու թիկնապահ Գերջիկովի հետ... Եղաւ արևմտեան քաղաքներում, ունեցաւ բազմաթիւ տեսակցութիւններ, չափեց պետութիւնների տրամադրութիւնները։ Ահա Բօրիսը և մեզ մօտ, „Դրօշակի“ խմբագրատան։ Զւարթ, աշխոյժ, կենսուրախ և միշտ անխռով լաւատես, չը նայած այն աննպաստ տպաւորութիւններին, որ նա ստացել էր դիւանագիտական շրջաններից...

„Մի օր վերջապէս, կըստիպենք նրանց միջամտել, ինչպէս հարկն է, չը յուսահատւի՞նք“—այսպէս էր խրախուսում նա մեզ և իրեն։

Ժամանակում նա երկար մնաց և մենք տեսնում էինք յաճախ։ Երեսուն տարեկան այդ երիտասարդը այդպիսի գարիբալդիական հռչակով՝ համարեա թէ մի երևոյթ էր։ Պարզ ու սովորական նրա արտաքինը լուսաւորում էին զայդ կենդանի աչքերը, որոնք մատնում էին ոչ-սովորական, նուրբ ու թափանցող մի խելք։ Անտարակոյս, մարդիկ պատահաբար չեն հերոսանում...

Եւ ահա այդ կեանքը, այնքան լեցուն, այնքան հարուստ, այնքան, մանաւանդ, խոստացող—արդէն մարած... Այն հրեղէն տեմպերամենտը, որ միշտ մղում էր դէպի նորանոր սխրագործութիւններ, այն մեծ սիրտը, որ պապակւում էր ազատութեան ծարաւով և որ մշտապէս եռում էր սրբազնագոյն ատելութեամբ դէպի բռնութիւնը, դէպի թշնամին,—բոլորը չքացաւ։ Սարաֆովն ընկաւ ընդամենը 35 տարեկան, չ՚իրագործած իր պատանեկութեան նուիրական տենչը—տեսնել իր հայրենիք-Մակեդոնիան՝ ազատ հզօր և բարգաւաճ...

Եւ ընկերները, ամբողջ մարտնչող երիտասարդութիւնը Մակեդոնիայի ու Բուլգարիայի՝ այսօր խորունկ սգով համակւած, ողբում են անփոխարինելի հրամանատարի կորուստը։

Իսկ փոքրաթիւ ընտիր կորիւնները, որոնք անբաժան ու ամենուրեք ուղեկցում էին հանդուցեալին, իբրև ձեռնհաս խորհրդակիցներ ծանր բոպէներում, իբրև թիկնապահներ, որոնք կապւած էին հերոսի հետ մի չնաշխարհիկ գաղափարական կապով, մի հանդամանք որ յիշեցնում է վաղեմի դաւադրական կազմակերպութիւնները, ձուլւած երկաթէ դիսցիպլինի վրայ, երդման սրբազան արարողութեամբ—այդ անվեհեր կորիւնները կանգնած են այնտեղ, թանկագին դամբարանի շուրջը շանթահարւած անարդ պատահարից, խորտակւած անդարմանելի վշից, վրէժինդրութեան կրակով լեցուն, մի-մի զարհուրելի ուրուականներ... Նրանք երբէ՛ք, երբէ՛ք չեն հանդստանայ...

Ձեր վիշտը մերն է, որբացա՞ծ ընկերներ։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ձեզ հետ միասին ողբում է մեծ հերոսի և ընկերոջ մահը։ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համար ձեր դատը եղել է միշտ հարազատ դատ, ձեր հերոսները՝ հարազատ ընկերներ։ Եւ դաշնակցական մեր շրջաններում Բօրիս Սարաֆով և դուք բոլորդ ձեզ միշտ զգացել էք ձերայիններ մէջ։ Էպիզոդներ

կան և յիշողութիւններ, որոնք կը մնան միշտ անջնջելի մեր սրտերում,—մենք որ Բօրիսի ու ձեր մարտական կուսակցութեան հետ այնքա՞ն ընդհանուր խոհեր ենք ունեցել և նոյնիսկ ընդհանուր ձեռնարկներ, դաւադրական, ահրինոտ ձեռնարկներ, որոնց հերոսական վկաներից են 1901-ին Ադրիանապօլսում կախաղան բարձրացած Մերջանովներն ու Պետոները...

Ձեր կուսակցութիւնը կ'ապրի։ Այն այժը, որ մղել է ամենախիզախ ճակատամարտները Մակեդոնիայում, որ առաջացրել է ամենամեծ ապստամբութիւններից մինը,—նա չի մեռնի։ Մեծ հերոսի ըմբոստ ոգին կը շարունակէ ապրել իր անհամար աշակերտների մէջ, կը խթանէ նրանց դէպի նոր գործեր, նոր ու աւելի հոյակապ կռիւներ, մինչև որ կը ծագի իսկական արշալոյսը մակեդոնական ազատագրութեան։

Լաւ յիշենք միշտ Բօրիսի խօսքը, ասուած „Դրօշակի" խմբագրատան „չը յուսահատուի՞նք"... Սեղմե՞նք շարքերը և յառաջ։

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՕՑԻԱԼԻՍՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Չորրորդ Նամակ

Անցեալ երկու նամակներով ես, որքան կարող էի, պարզեցի ու հիմնաւորեցի ընթերցողի առաջ այն պահանջները, որ առաջադրել է մեր կուսակցութիւնը իր նպատակն ծրագրի մէջ բանւորական խնդրի առթիւ։ Յետագայ նամակներով ես կը շօշափեմ այն պահանջները, որոնք ամբողջովին վերաբերում են աշխատաւոր գիւղացիութեան դրութեան։

Դուք յիշում էք, ի հարկէ, որ հողային հարցում Դաշնակցութիւնը պաշտպանում է հողի համայնացման սկզբունքը։ Ապա ուրեմն մեզ մնում է այստեղ ի հարկէ ընդհանուր գծերով, վճռելու երկու հարց. առաջին՝ ինչո՞վ է պայմանաւորուում հողի համայնացման անհրաժեշտութիւնը և երկրորդ՝ ի՞նչ է նա նշանակում և ինչպիսի կոնկրէտ ձևեր պիտի ընդունի նա։ Տեսնե՞նք։

*

Մեզնից մի ամբողջ մէկ ու կէս դար առաջ ամենամեծ ու ազնիւ մտածողներից մէկը, Ժան-Ժակ Ռուսսօն, գրում էր.

„Նա, ով առաջին անգամ ցանկապատելով հողի մի կտոր ասել է. „Այս հողն իմն է", և գտել է իրեն հաւատացող բաւականաչափ յիմար մարդիկ, նա՛ է իսկական հիմնադիրը եղել ժամանակակից հասարակութեան։ Որքա՞ն ոճրագործութիւններից, պատերազմներից ու սպանութիւններից, քանի՞-քանի՞ աղէտներից ու սարսափներից կազատէր մարդկութիւնը նա, ով ցանկապատերից դուրս քաշելով ցեցերը և ոչնչացնելով հողամիջի սահմանները կը գոռար մարդկանց ու կասէր,—մի լսէք այդ խաբեբային, դուք կը կորչէք եթէ մոռանաք, որ հողից ստացուած բերքերը պատկանում են բոլորին, իսկ հողը՝ ոչ ոքի"...

Այո՛, այդ ճշմարիտ խօսքերը ասելուց յետոյ շա՞տ ջուր է հոսել, շա՞տ բան է փոխուել և այնուամենայնիւ ոճրագործութիւնները, սպանութիւններն ու պատերազմները, սարսափներն ու աղէտները էլի շարունակւում են, և կարծես անտեսանելի է նրանց վախճանը. ցանկապատերի ցիցերը դեռ կանգուն են, սահմանները չեն ոչնչացրած, հողի բերքերը պատկանում են միայն քչերին, իսկ ինքը հողը պատառ-պատառ արուած առաջուան պէս գտնւում է „խաբեբաների" ձեռքում, որոնք ահեղաբար յայտարարում են. „այս մասը իմն է"։ Ուրեմն այս ամենից ի՞նչ է դուրս գալիս. այն, որ ճշմարտութիւնը մնում է ճշմարտութիւն նոյնիսկ այն ժամանակ, երբ ոմանք նրան չեն հասկանում, իսկ ուրիշները ուժ չունեն նրան մտցնելու կեանքի մէջ։ Հարկաւոր է, որ այդ ճշմարտութիւնը ըմբռնէին բոլոր աշխատաւորները, բոլոր նրանք, որոնք ոռոգում են հողը իրենց արցունքներով, ապա և իրենց արիւնով։ Ուրեմն փորձե՛նք պարզաբանելու հողի մասին եղած հարցերը. տեսնե՛նք որտեղի՞ց և ինչո՞ւ է առաջանում գիւղացի ժողովրդի կարիքը, և ինչ է անհրաժեշտ անել, որպէսզի նրան, եթէ հնարաւոր չէ վերջ տալ, գոնէ սահմաններ դնել։ Վաղուց ի վեր ասում են, թէ գիւղը ուժասպառւում է, գիւղացիութիւնը աղքատանում է։ Այդ խօսքերի մէջ չը կայ չափազանցութիւն։ Գիւղացիական հողը ուժից ընկել է. հունձքը տեղ-տեղ անչափ պակաս է, գիւղացիները՝ մի տեղ կխաբաղց, մի այլ տեղ փրթւում են սովից. անդադար մեծանում են հարկերն ու ապառիկները, կալուածատէրերի, կեղեքիչների ու չինովնիկների կողմից հողագործի վիզը գցած պարանը շարունակ նեղանում, խեղդում է նրան. „աշխատաւոր գիւղացիութիւնը" յաճախ փախչում է իր հայրենական տնից-տեղից, նա վազում է կամ դէպի նոր վայրեր մի կտոր հող ճարելու համար, կամ դէպի հանքատեղերը, կամ դէպի քաղաք, դէպի գործարաններն ու զաւօդները, իսկ ով մնում է հայրենի խրճիթում նա էլ կալուածատէրի կամ վաշխառուի լծի տակ ընկած յուսահատութեան բոպէին շտապում է ինքն իր ձեռքով անել իր սեփական դատաստանը յաճախ գազանաբար վարուելով իր կեղեքիչների և „տէրերի" կայքերի հետ։ Եւ ահա բոլոր այս աղէտների դիմաց բարձրանում է մի խռովայոյզ հարց. ինչո՞ւ է գիւղը ուժասպառւում, ի՞նչն է, որ առաջացնում է գիւղացիական այդպիսի սուր թշուառութիւն։ Այս հարցին զանազան պատասխաններ են տալիս։

Կան պարզամիտներ, որոնք կարծում են, թէ գլխաւոր ցաւը գիւղացիութեան տգիտութեան մէջն է—դէ՛, չեն կարողանում էլի ինչպէս պէտք է խելացի կերպով մշակել հողը, դրանից էլ առաջանում է հացի պակասութիւն ու սաստիկ աղքատութիւն։ Այդ տեսակ պատասխանը կիսատ պռատ մտածելու արդիւնք է.—ի՞նչ օգնութիւն կարող է անել գիտութիւնը, երբ նրան անկարելի է գործադրել որևէ բանի վրայ, բացի այդ ով չը գիտէ, որ քաղցած փորով անկարելի է գիտութեան մասին մտածել։ Կան մարդիկ էլ, որոնք մօտեցել են ճշմարտութեան, բայց լրիւ նրան չեն հասկացել։ Նրանք ամբողջ մեղքը գանում են այն բանի մէջ, որ գիւղացիութիւնը տուլքերով ու հարկերով ծանրաբեռնուած է։ Նրանց խօսքերում կայ ճշմարտութեան մեծ բաժին, բայց ոչ ամբողջ ճշմարտութիւնը. հարկերը, ինքն ըստ

ինքեան որքան էլ ճնշող լինէին, չէին կարող գիւղը կատարեալ քայքայման հասցնել, եթէ գիւղացին ապրուստի աղբիւր ունենար։

Ապա ուրեմն ո՞ւր պիտի փնտռել գիւղացիութեան քայքայման իսկական պատճառը։

Պատճառներ շատ կան։ Նրանց թւում, իհարկէ, գըտնւում են և՛ ուժից վեր հարկերը, և՛ տգիտութիւնը և շատ ուրիշները. բայց գլխաւոր հիմնական պատճառները երկուսն են. առաջինը՝ սակաւահողութիւն, երկրորդը—հողերի անհաւասար բաժանումը։

Վերջինս բնականաբար աչք է ծակում այն ժամանակ, երբ համեմատում ես որ և է կալւածատէրի կամ վաշխառուի հողային հարստութիւնը աշխատաւոր գիւղացիների ողորմելի հողակտորների հետ։ Բայց կայ այլ ձևի անհաւասարութիւն ևս—ճիշտ է (ոչ այնպէս խիստ արտայայտւած—դա իրենց գիւղացիների միջև եղած անհաւասարութիւն է։ Մինչդեռ մէկի հողը այնքան քիչ է, որ խեղճը չը գիտէ թէ ինչի վրայ գործադրի իր աշխատանքը, միւսը, ընդհակառակը մենակ անկարող լինելով կառավարել հողերը վարձում է անհող աշխատաւորներ։ Այդպիսի „մեծահող“ գիւղացիներ բախտաւոր ընտրեալներ են։

„Սակաւահող“ գիւղացու հողը շատ աւելի պակաս է այն քանակութիւնից, որը անհրաժեշտ էր նրան իր անաղքատ գոյութիւնը պահպանելու համար. դրա մէջ է նրա դժբախտութիւնը, դրա մէջ է բոլոր չարիքների ամենամեծ պատճառը։

Սակայն սակաւահողութիւնն ու անհաւասար հողաբաժանումը ևս կապւած է ժողովրդի տնտեսական կեանքի ժամանակակից կազմի մէջ եղած մի շատ կարևոր հանգամանքի հետ։ Այդ հանգամանքն է գիւղացիական կարիքի, այսպէս ասած, նախնապատճառը, նրա մէջ է այն չարիքի արմատը, որը իր ցանցերի մէջ է առել ամբողջ գիւղը տակից մինչև գլուխ։ Այդ չարիքը—հողի մասնաւոր սեփականութիւն է։

Ամեն տեղ, ուր հողը բաժան-բաժան է արւած „ցիցերով և խրամատներով“, ուր իւրաքանչիւր հողաբաժնի վրայ ամուր կերպով նստած է սեփականատէրը ու ամբողջ կոկորդով գոռում է. „այս մասը ի՞մն է“,—ամեն տեղ գոյութիւն ունի սակաւահողութիւնը, գոյութիւն ունի անհաւասար հողաբաժանումը։ Եւ պիտի գոյութիւն ունենայ մինչև այն ժամանակ, երբ մարդիկ կը դադարեն հողի վրայ նայել ինչպէս նայում են ապրանքի վրայ, որը կարելի է գնել, վաճառել, գրաւ դնել, կապալով տալ, ընծայել, ժառանգութիւն թողնել որդիներին,—մի խօսքով, քանի գոյութիւն կունենայ հողի մասնաւոր սեփականութիւնը։

*

Սակաւահողութիւնից դրդւած գիւղացին կապալով հող է վերցնում կալւածատէրից։ Այդտեղից առաջ է գալիս կապալագիրը, որը շնորհիւ աւատական-ճորտատիրական մնացորդների գոյութեան առանձնապէս ծանր է դառնում։ Ուզո՞ւմ ես կապալով հող վերցնել—վճարի՛ր դրա համար կալւածատէրի վրայ նստած ծախսերի եռապատիկը, ուզո՞ւմ ես մի փոքր կտոր հող առնել—գնի՛ր ինչ որ կառաջարկեն „բարերար-տէրերը“ և վճարի՛ր որքան կը պահանջեն։ Իսկ եթէ փող չունիս մի կտոր հող ձեռք բերելու, կամ կապալով վերցնելու—գնա՛, դարձի՛ր գրոշանոց վարձատրութեամբ օրավարձով աշխատող էլի նոյն կալւածատէրի մօտ. գնա՛ դաժանակիր աշխատանքի և ապրի՛ր կիսաքաղց։

Ճիշտ է կայ և մի ուրիշ ելք սակաւահողութեան չարիքից ազատւելու համար. բայց ե՞՛լք է դա արդեօք, թէ՞ մի նոր և աւելի վատթար կապալագիր,—դրա պատասխանը կարող է տալ միայն նա, ով իր սեփական կաշի վրայ է կրել գիւղական վաշխառուին պարտական լինելու հաճոյքը. եթէ ուզում է գիւղացին հող գնել, եթէ հարկաւոր է նրան շտապել վճարելու ապառիկները, կամ ցորենի պաշար ունենալու, կամ եթէ նա մտածում է ձեռք բերել մի ձի—ամեն դէպքում վաշխառուն է նրա երեսն ի վեր կանգնում իր „բարի խորհրդով“ մէկ էլ „եղբայրական“ օգնութեամբ, և ամենանգամ նա ճզմում, կեղեքում, խեղդում է գիւղացուն։

Սակաւահողութեան ժամանակ գիւղացին, իր ցաւը դարմանելու համար, ունի վերջապէս էլի մի միջոց—ձգել բոլորովին գիւղը և փախչել քաղաք ճորտանալու գործարանատիրոջ կամ հանքագործին։ Գիւղացին այդ էլ է անում։ Գնում է քաղաք, իրենով մեծացնում է գործ ունեցողների ու անգործների բանակը, իջեցնում է քաղաքային բանւորների վարձագինը, համաձայնւում է ամենաողորմելի վարձատրութեան, միայն թէ սովից չը մեռնի։

Այդպէս ուրեմն անհաւասար հողաբաժանումը և սակաւահողութիւնը ստեղծել է գիւղացիների համար ճորտատիրութիւնից ոչ աւելի լաւ մի դրութիւն.—ճորտ՝ կալւածատիրոջ, ճորտ՝ վաշխառուին և ճորտ՝ հանքագործարանային—ահա երեք փշոտ ճանապարհները, որով աշխատաւոր գիւղացիութիւնը ուզի-չուզի ստիպւած է գնալ։ Շղթայակապւած կալւածատէրի հողին ու վաշխառուի քսակին, ստրուկ „աղային“ և ստրուկ վաշխառուին, միաժամանակ աշխատաւոր գիւղացին ստրուկ է և կառավարութեան։ Նա չունի ոչ մարդկային և ոչ քաղաքացիական իրաւունքներ։ Ահա թէ ինչու նրան պէտք են միաժամանակ և՛ հող և՛ ազատութիւն։ Առանց հողի ազատութիւնը հաստատ չէ, բայց հողն էլ մեծ արժէք չունի առանց ազատութեան—միևնոյն է նա երկար չի մնայ գիւղացու ձեռքում կը փախչի...

Ուրեմն, աշխատաւոր գիւղացին, որ մի տխուր թիւրիմացութեամբ կոչւում է „ինքնուրոյն“, „սեփականատէր“, իսկապէս գտնւում է անասնի նման չլանակապւած ազնւականների և կուլակների հողին. նա—կամ հարկադրւած կապալառու է, կամ հարկադրւած վարձաւոր (գիւղական պրոլետար)։ Դաժանակիր աշխատանքով վաստակած բոլոր աւելացուկները և հողից հեկած ամբողջ եկամուտը անցնում են նրանից կալւածատէրի, վաշխառուի, գիւղացուց հաց գնող չարչու, գանձարանի և այլոց գրպանները. իսկ իրա, գեղջուկի ձեռքին լաւագոյն դէպքում մնում է ողորմելի փշրանքներ իր գոյութիւնը պահպանելու, և այդ էլ նրա համար, որ հնար լինի էլի շարունակելու աշխատել. բանից դուրս է գալիս, որ իբր թէ նա աշխատում է ոչ թէ ինքն իրեն համար, այլ մի ուրիշ տիրոջ համար, որից և ինչպէս ամեն մի ճորտ, ստանում է հազիւ միայն աշխատավարձ։ Սակայն աշխատաւոր գիւղացին յաճախ այդ էլ չի ստանում, յաճախ նա տալիս է կալւածատէրին ու վաշ-

խառուին ոչ միայն հողից ու տնտեսութիւնից եկած ամբողջ շահը այլ և իր այդ աշխատավարձի մի մասը, այսինքն այն ողորմելի միջոցների մի մասը, որով պահպանւում է նրա հոգին իր մարմնի մէջ։

Աշխատաւոր գիւղացու այդպիսի խորապէս անարդար դրութիւնը որի մէջ գիւղացին ո՛չ ինքնուրոյն արդիւնաբերող է ո՛չ էլ կարծես հարկադրւած վարձաւոր—պիտի շարունակւի, քանի նա, գիւղացին, ստիպւած կը լինի կալւածատէրից, կամ հէնց իր վիճակից մեծահող գիւղացուց, հող գնել, հող կապալով վերցնել կամ նրանց մօտ վարձկան դառնալ։ Հող առնելը ու կապալով վերցնելը նա կը դադարեցնի միայն այն ժամանակ, երբ միւսները—լինի կալւածատէր, գիւղական վաշխառու, թէ հէնց գիւղացի—կը դադարեն հողը ծախել ու հող կապալով տալ։ Իսկ հող ծախելը կամ կապալով տալը մարդիկ կը դադարեցնեն միայն մի պայմանով՝ որ հողը ուժն էլ պատկանելիս լինի նա, դադարէ ժասնաւոր սեփականութիւն լինելուց։

Եւ երբ այդպէս կը լինի, այն ժամանակ աշխատաւոր գիւղացիութիւնը միանգամ ընդմիշտ կազատւի կալւածատիրական ու վաշխառուական ճորտութիւնից. այն ժամանակ նա վարձկան ծառայութիւն էլ չի անի, որովհետև իւրաքանչիւրն ինքն իր համար կաշխատի և վարձու աշխատանքի համար մարդ չի ճարւիլ. այն ժամանակ կը գայ վախճանը ա՛յն անհեթեթ ու երկդիմի դրութեան, որի մէջ այժմ տառապում է աշխատաւոր գիւղացին, որ ոչ էն է սեփականատէր և ոչ էլ պրօլետար։

Այս դրութիւնից դուրս գալու համար, կրկնում եմ միայն մի ելք կայ—ամենուրեք պէտք է գործադրել ֆրանսական մեծ մտածողի խօսքերը՝ „դէն շպրտել ցանկապատների ցիցերը և ոչնչացնել հողամիջի սահմանները“, հարկաւոր է ինչպէս տնտեսագէտներն են ասում „վերցնել հողը ապրանքային շրջանառութիւնից“, ոչնչացընել հողի վրայ եղած մասնաւոր սեփականութեան իրաւունքը...

*

Աշխատաւոր գիւղացիութիւնը յաճախ ասում է. հողը Աստծունն է, հողը ոչ ոքի է։ Դա նշանակում է, որ հողի սեփականատէր ոչ ոք չի կարող լինել, ինչպէս որ ոչ ոք չի կարող ասել, թէ „արեգակն ի՞մն է“. կամ „օդն ի՞մն է“։

„Հողը Աստծունն է“։ Դա նշանակում է, որ ո՛չ պետութիւնը, ո՛չ համայնքը, ո՛չ ազնւականը, ո՛չ քաղաքացին և ո՛չ էլ գիւղացին իրաւունք չունեն նրան, հողին, ամբողջովին տիրել, ինչպէս տիրում են մի ապրանքի, որովհետև ամեն մի „Աստուծոյ պարգև“ բոլոր մարդկանց սեփականութիւնն է։

„Հողը ոչ ոքի է“։ Այդ նշանակում է, որ նա ոչ Պետրոսին է, ոչ Կիրակոսին և ոչ Մարտիրոսին, այլ նա և՛ Պետրոսին է, և՛ Կիրակոսին և՛ Մարտիրոսին, որ նրանք բոլորը իրաւունք ունին աշխատելու հողի վրայ, որ բոլորը կարող են օգտւել հողից իրենց բարեկեցութեան համար։

Նոյնը հաստատում ենք և մենք, դաշնակցականներս, հետևեալ մեր խօսքերով. „հողը ամբողջ ժողովուրդի սեփականութիւնն է“. կամ թէ՝ „իւրաքանչիւր աշխատաւոր իրաւունք ունի հող մշակելու այն չափով, որ կարողանայ առանց ուրիշի աշխատանքը շահագործելու բաւարարութիւն տալ իր և իր ընտանիքի սպառողական պահանջներին“։

Ո՞վ դուրս կը գայ ապացուցանելու, որ մարդիկ չեն ունեցել այդպիսի „իրաւունք“, „հող մշակելու իրաւունք“, —որ երբէք դա չի եղել և հաղիւ թէ լինի էլ։

Չի՞ եղել, բայց պէտք է լինի։ Կար ժամանակ, որ անգլիացիք էլ իրաւունք չունէին ազատօրէն դաւանելու այս կամ այն կրօնը, բայց բռնութեան դէմ մղած կուռւում նրանք ձեռք բերեցին այդ իրաւունքը։ Մի ժամանակ ֆրանսացիք էլ չէին համարձակւում ազատօրէն արտայայտել ու տպագրել այն, ինչ մտածում էին, բայց վերջ ի վերջոյ, նրանք նուաճեցին խօսքի ու մամուլի ազատութիւն։

Իրաւունքներն խամ աստուածային օրհնութիւն չի, որ պատրաստի թափւին երկնքից. նրանք կռւով են ձեռք բերւում։

Նոյնը պէտք է ասել և հող մշակելու իրաւունքի մասին. պէտք է կռւել նրա համար, պէտք է նրան նուաճել, իսկ իրաւունք ձեռք բերելուց յետոյ, նա ժամանակի ընթացքում կը մտնի մարդու հոգու ու արեան մէջ, այնպէս որ յետոյ դժւար է լինելու հասկանալ թէ այդ ինչպէս է եղել որ մարդիկ ապրել են առանց այդ իրաւունքի, որ նրանք համաձայնւել են որևէ Մելիք-Աղամալովին, կամ վաճառական Մանթաշեվին, կամ հէնց նոյնիսկ Էջմիածնի վանքին հող տալ ու այդ հողը հաշւել իբր նրանց մասնաւոր սեփականութիւն։

Շատ չի անցել այն ժամանակից, երբ կալւածատէրը նայում էր գիւղացու վրայ, ինչպէս իր սեփական ապրանքի վրայ և նրա հետ վարւում էր իր քէֆի ուզածի պէս։ Բայց ժամանակները փոխւեցին—կալւածատէրը կորցրեց „գիւղացու վրայ ունեցած իրաւունքը“, իսկ գիւղացին ձեռք բերեց իրաւունք „մարդ կոչւելու և ոչ ապրանք“։ „Իրաւունքները“ լինում են զանազան տեսակ, ոմանք անարդար, միւսներն՝ արդարացի։ Անարդար իրաւունքները պիտի կեանքից արմատախիլ անել, իսկ արդարները—ամրապնդել մարդկանց մտքերի ու բարքերի մէջ։ Նոյնը պէտք է ասել հողի իրաւունքի մասին. այդ իրաւունքը արդար է,—թէ գիտնական մարդկանց խելքով և թէ „խաւար գիւղացու“ հասկացողութեամբ։ Հետևապէս պէտք է այդ իրաւունքը միացնել „մարդու սրբազան անկապտելի իրաւունքների“ թւին ու դնել այնպիսի իրաւունքների շարքում, որպիսիք են խղճի ազատութեան, խօսքի ազատութեան, ժողովների ազատութեան և այլն իրաւունքները։

Գիւղացիները յայտարարում են. „առաջ մենք, գեղջուկներս, ստրուկներ էինք, կարող էին մեզ առևտուրի առարկայ դարձնել, կարող էին մեզ իրար ընծայել կամ մէկը միւսով փոխանակել։ Մենք ուրիշների սեփականութիւնն էինք։ Այժմ մեզ ազատել են, իսկ հողը մնացել է էլի նոյն անազատ վիճակում։ Այժմ հարկաւոր է հողն էլ ազատել սեփականութեան լծից—որպէսզի նա դառնայ մեր ընդհանուրի սնուցանող մայրը և որպէսզի նրան, մեր մորը, ոչ ոք չը կարողանայ ծախել կամ հարստանալու աղբիւր դարձնել։

Ահա հէնց այդ է „հողի ազատումը սեփականու-

թեան լծից"—այդ է որ մենք անուանում ենք հողերի համայնացումն...

Ահա այժմ այսքանը։ Մանրամասնութիւնները հետեալ նամակով։

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

Մօտ կէս քառորդ դար է որ Օրմանեան պատրիարքական գահին վրայ կապարի պէս ծանրացած չուզեր բաժնուիլ, և եթէ ներելի է այսպէս ըսել՝ տասներկուս ու կէս փարայի խեր չունեցաւ ազգին։ Պատրիարքութիւնը փառասիրական աստիճան մըն էր, աւելի վերերը բարձրանալու համար, excelsior և ոչ մասնաւոր սրտացաւութիւն մը դէպի տառապող ռամիկ և... գռեհիկ ժողովուրդը, որ հազիւ շնորհ կը գտնէր գերապատիւ Օրմանեանի ճիզվիդ աստուածաբնազանցական ազնւականութեան առջև։

Օրմանեան personna grata-ն է Ապդիւլ-Համիդի, չէ կարելի ժխտել. բայց պէտք չէ ուրանալ նաև որ այդ թաթարադէմ պատրիարքը, հեռու հայ ցաւին թարգմանը և ուժգին արձագանքը ըլլալէ, միակ մը տահոգութիւն մը ունեցած է, պալատին հետ հաշտ և հաճելի մնալ և այսպէս, որքան հնար է, շատ մաշեցնել պատրիարքներու գահը. Սուլթանը գտած էր իր մարդը, և Օրմանեանն ալ գտած էր ժամանակը։

„Զուարճանամ, ով արքայ, աշխարհս անցաւոր է..."

Օրմանեանի համար փրկչանոցներէն և Պոլսէն դուրս աշխարհ չը կայ, իր սիրելի հօտն է Պոլսոյ հայութիւնը, որոնց քարոզ ու ճռճռան դամբանականներ խօսելէն գլուխը ուռեցաւ. բնական է այդպիսի բթացած գլխով ազգի մը ճակատագիրը չէր կարելի վարել։

Հայրիկի մահը աւելի կը շեշտէ պարապութիւնը և թեթեւութիւնը Օրմանեանի պատրիարքութեան։ Այն անսահման և համադղորդ համակրութեան ալիքները որ կը բարձրանան աշխարհի չորս ծայրերէն Հայոց ժողովրդական կաթողիկոսի դագաղին շուրջը, մտածել կուտան Պոլսոյ պատրիարքին, որ կզգայ թէ բաւական չէ Փրօփականդայի Աստուածաբանական խրթին չէութիւնները կլլած ըլլալ և երկնային բարոյականի փախստի ուղիները ճանչնալ, պէտք է, իբրև հանրային գործիչ, վայելել որոշ և պատուաբեր ժողովրդականութիւն, սիրել ու սիրուիլ ժողովրդէն. Օրմանեանի անունը արդէն անջնջելի կերպով քանդակուած է անպիտան եկեղեցականներու շարքին մէջ։ Եթէ օր մը մահը գայ հնձէ անոր հաստաբուն մարմինը, Եըլդզի օգոստափառ քէլ Իպիշը միայն, իր սովորական խեղկատակի լրբութիւնովը պիտի ըսէ, „սատրդ փաթրիք իտի"։

Ի՞նչ կարող է ընել Պատրիարքը՝ ատկէ աւելի չը կրնար ընել, կառարկեն։ ճիշտ է, երբ այսպիսի դրժէ բախտ վիճակի մը մէջ, ուր ժողովուրդը կը տապկուի, և պատրիարք մը չը կրնար իր ազգի ցաւերուն օգտակար ըլլալ, փոքրիկ ինքնասիրութիւն մը կը բաւէ որ հրաժարի և ոչ թէ ցոյցի համար կուռքի պէս մնայուն և ծթռի գահի մը վրայ, անպէտ և անօգտակար։ Ոչ մէկ ժամանակ այդ մարմնապաշտ մարդը գաւառի հայ ժողովրդին ցաւերուն լրջօրէն չէ վերաբերուած, ոչ ալ կրցաւ սրտագին ճիգ մընել, սովին և գաղթականութեան առաջքը առնելու համար, և ոչ զոհաբեր կամքը ունեցաւ բոլոր բառնալու փախստական հայերու կալուածներու գրաւման դէմ, բացարձակապէս և դաժանօրէն դաւաճանեց հայ ժողովրդին, որուն արիւնոտ ոսկիներով կը պարարի և կաշխարհականանայ։ Ապդիւլ Համիդ, որուն չարագործութիւնները դէպի հայ ազգը, երթալով ամենավայրագ կերպարանք կառնեն, սկսած է ձեռք զարնել ազգապատկան կալուածներուն, այն ալ Օրմանեանի օրով՝ որ պատրիարքներու ամենէն „սիրելին" և քաղաքավարին համարուած է մապէյնի առջև։

Օրմանեան պատրիարքի գործունէութիւնը ահարկու և հեգնող ցուցամոլութիւն մըն է, ապրիլ և փառաւորուիլ բեմբասաց հռետորութիւններով։ Իր բոլոր հոգն ու ժամանցն է աչքապուկ դարձուածքներով ամբոխը շլացնել,—ակօռայի մարդը—թէ ինչպէս կարելի է „սկզբնական մեղքը" կամ „դուք ղկայսերն կայսեր..." բնաբան ընտրելով ցոյց տալ իր մտքի նուրբ խաղերը... „աղտոր դերասան" մըն է մեր պատրիարքը պիտի ըսէին Պոլսոյ հայրսուրբերը և սրբազանները։ Երբ կաթողիկոսի հոգեհանգստին առթիւ խօսած քարոզին մէջ, կը յայտնէ որ Խրիմեանը „աւելի սրտի քան թէ գիւանագիտութեան տէր էր", արդեօք մտաբերեց Օրմանեան թէ իր... „անսիրտ" ազգասիրութիւնը ինչ պտուղ տուաւ մեզի, և ո՞ւր պահած է իր „գիւանագիտութիւնը" որուն անուղղակի կերպով գովեստը կը փորձէ ընել։ Ո՞րն է այդ գիւանագիտութիւնը, ա՞յն՝ որ արհամարոտ անպատկառ պատասխաններ կստանայ Թիւրք նախարարներէն, թէ ա՞յն՝ որ այսքան տարիներ կրցաւ օրօրել հայ ժողովրդի համբերութիւնը և մնաց պատրիարք հարստութիւն դիզելով։

Այդ մարդու անզգամ և կեղծ պաշտօնավարութեան մէջ չկայ դրական և համակրելի գիծ մը որուն վրայ պահ մը դադար առնէ մեր ներողամտութիւնը և ակնարկը. այդ գործունէութիւնը ահաւոր պատրանք մըն է, որ ոչ մէկ հզօր գիտակցութիւն և սրտաշարժ զոհաբերութիւն ցոյց չը տաւ առնական քայլեր առնելու, իբր տանջուած ժողովրդի մը ներկայացուցիչ. ընդհակառակը, անպատկառ ծիծաղով մը իր դիակը նետեց նորէն գահին վրայ, նոյնիսկ մայր եկեղեցիի մէջ սպանութեան փորձէն յետոյ, առանց նոյնիսկ ընչին պատուոյ զգացում մը դնելու իր վարմունքին մէջ։

Եթէ Օրմանեան ճանճի չափ—ոչ աւելի—սիրտ ունենար, սուլթանի երեսին կը շպրտէր կլոբ մը թուք ըսելով, „լիրբ, մինչև երբ այդ ստախօսութիւնը, մինչև ե՞րբ այդ արիւնի ծարաւը, մինչև ե՞րբ այդ շնական ծիծաղը այդքան թշուառութեան, լաց ու կոծին առջև..., մինչև ե՞րբ..." և աղաքողոնը շալկելով կը հեռանար այն գահէն, որուն այնքան ամուր կառչած կերևի։

Օրմանեան զուրկ է կեանքի զսպանակէն—սրտէն. հայ ժողովուրդը զգացած էր այդ էական պակասը իր պատրիարքին մէջ, և չէր խաբուած, ադոր համար էր որ իր անդարձ վճիռը տուաւ խոշոր Օրմանեանի,

Մանէ, թէկեղ, փարէս։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Պատրիարքարան Հայոց

Կ. Պոլիս, 12 մայիս 1907 թ.

№ 1203.

Հոգեշնորհ Տ. Ստեփան Վրդ. Աղազատեան
Վանահայր Լիմ և Կտուց Անապատաց
Ի ՎԱՆ

Մարտ 12 թուականաւ և 294 համարաւ Ձեր ուղղած գրութենէն տեղեկանալով որ թեմիդ ժողովրդեան յետնեալ տուրքերուն համար ոչխարներ ի վաճառ կը հանուին և վճարման համար խնդրուած պայմանաժամը կրճատուի, որով կարօտ ու չքաւոր գիւղացիք մեծապէս կը նեղուին, հարկ դատեցինք իրաց վիճակը յատակ թագրիրով մը պարզել ներքին գործոց նախարարութեան և արդար ու օրինաւոր տնօրինութիւն խնդրել և կը յուսանք որ նկատողութեան առնելով ժողովրդեան ցաւալի վիճակը, կը տրուին պէտք եղած հրամաններն բարձրելու համար եղած խստութիւններու և շնորհելու փափաքուած պայմանաժամը:

Մնամ աղօթարար պատրիարք Կ. Պոլսոյ
ՄԱՂԱԲԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարքարան Հայոց

Կ. Պոլիս, 24 օգոստ. 1907 թ.

№ 1737.

Հոգեշնորհ Տ. Ստեփան Վրդ. Աղազատեան
Վանահայր Լիմ և Կտուց Անապատաց
Ի ՎԱՆ

Ստացանք յուլիս 31 թուականաւ Ձեր ուղղած գիրը և տեղեկանալով որ Կտուց անապատի միաբանութենէն երկու վարդապետ ու վեց աշխարհական ազգայինք տակաւին կը մնան ի բանտի, արժան դատեցինք թագրիր մատուցանել արդարութեան գործոց նախարարութեան և անոնց ազատ արձակուիլը խնդրել: Կը յուսանք որ մեր այս դիմումն փափաքուած արդիւնքը կունենայ ու խեղճ բանտարկեալք կը գտնեն իրենց ազատութիւնը շնորհիւ կայս. կառավարութեան արդարասիրութեան:

Մնամ աղօթարար պատրիարք Կ. Պոլսոյ
ՄԱՂԱԲԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Արդարութեան և կրօնի նախարարութեան կողմէ հայոց պատրիարքութեան՝ ի պատասխան գրած 11 օգոստ. 1323 թիւ 44 համարաւ հրամանագրի պատճէնն է հետևեալը:

Վանայ կուսակալութեան պատկանող գիւղերէն 17 տարուան յետնեալ տրոց գումարը գաղթող, մեռած, որբ և կարօտելոց բաժիններն ըլլալով, այժմ ազգատ ժողովրդէն խստիւ գանձման ձեռնարկուիլը և մասնաւորապէս անցեալ մարտին ալիւր գիւղէն 60 հատ յղի ոչխարները կուսակալութեան կեդրոնը 10 լիրայի ծախուած և գումարը յիշեալ տրոց (պէգաեա) հաշուոյն անցուած ըլլալու մասին՝ իրենց, պատրիարքարանէն ներքին գործոց բարձր նախարարութեան տրուած յիշատակագրի առթիւ, վերոյիշեալ կուսակալութեան հետ տեղի ունեցած բանակցութեան, ի պատասխանի առնուած գրութեան մէջ յետնեալ տրոց գանձումը կատարուած է առաջին անգամ թէ կեդրոնի և թէ շրջակայ գաւառներու մէջ կազմուած յանձնաժողովներու միջոցաւ քննելէ և զտելէ յետոյ և գաղթականաց, մեռնողներու և աղքատաց վերաբերող ապառիկները յատուկ հրահանգի տրամադրութեան համաձայն գործողութիւն կատարելով արձանագրութիւններ զեղչուած են:

Գալով խիստ վարուելու մասին, պարտքերնին վճարելու զլացողները բանտարկութեան նման գործողութիւններ կատարուած ըլլալը ըսելով, այդպիսի պարագայի մը տեղի ունենալը, վերոյիշեալ յիշատակագրի մէջ յիշուած չըլլալով, պահանջուած մնացորդ տուրքերը պատկանեալ շրջանակէն խիստ գործողութիւն ըլլալու մասին տեղի ունեցած բողոքը իրաւացի չէր, և Ալիւր գիւղէն 60 հատ յղի ոչխար առնելով Վանի մէջ ծախուած ըլլալը սուտ է:

Կանոնագրի մէջ յղի ոչխար ծախելը արգիլուած ըլլալու նկատմամբ ծանօթութիւն չլինելով, իր պարտք վճարել չուզողի՝ պարտքին համար հարկահաւաքներու կողմէ կուսակալութեան կեդրոնը փոխադրուած ոչխարներ աճուրդի հանելով և ծախելով աճուրդագինը ծախուելիք ապրանքի իսկական օրուան ընթացիկ գնին համաձայն է և 60 ղրշ.էն պակաս արժէքով ոչխար ծախուելը իմացուած չէ, այդ մասին տեղէն պատրիարքարանին գրուած տեղեկութիւնները բարեացակամութեան հակառակ սուտերէ բաղկացած ըլլալը իմաց տրուած է մեզի:

Պատրիարքարանի կողմէ այսպիսի անհիմն բացատրութեանց և բողոքներու ականջ կախելէ աւելի պետական տուրքեր ժամանակին վճարելնուն համար պէտք եղածներու ազդեցիկ խրատներ տալը յարմար ըլլալով ձեր մեծութեան հաղորդելու համար վերոյիշեալ նախարարութենէն հրամանագրով յայտնուած է, ուստի պէտք եղած գործողութիւնը կատարելու մասին ձեր մեծութեան գրուեցաւ այս պաշտօնագիրը:

Պատրիարքարան Հայոց

Կ. Պոլիս, 24 օգոստ. 1907 թ.

№ 1763.

Գերաշնորհ Տ. Ներսէս ծ. Վրդ. Խապայեան
Առաջնորդական տեղակալ
ՎԱՆԱՅ

Լիմ և Կտուց անապատաց վանահայր Տ. Ստեփան վրդ. Աղազատեան մարտ 12 թուականաւ և 294 համարաւ Վանէն ուղղած իր մէկ յայտագրով գանգատ բարձած ըլլալով որ ժողովրդեան յետնեալ տուրքերուն փոխարէն ոչխարներ ի վաճառ կը հանուին, աժանագին, որոնք ժողովրդին ապրուստի միջոցն են ու կը զլացուի վճարման համար խնդրուած պայմանաժամը, ու այս պատճառով խեղճ գիւղացին մեծապէս կը տառապի, հարկ դատեր էինք իրաց վիճակը պարզել թագրիրով մը Բ. Դրան ու արդար ու օրինաւոր տնօրինութիւն խնդրել:

Այս անգամ արդարութեան գործոց բարձր. նա-

խարարն պատասխանագրով մը կը հաղորդէ մեզ այդ մասին գաւառիդ կուսակալութեան հետ կատարած բանակցութեան արդիւնքը, որով կը հերքուին տեղի ունեցած բողոքներն իբր ճշմարտութեան հակառակ։

Ներփակ հաղորդելով ձեզ վերոյիշեալ պատասխանագրոյն պատճէնը, կը յանձնարարեմք փութով հաղորդել մեզ անոր պարունակութեան մասին կարևոր լուսաբանութիւններ։

Աղօթարար պատրիարք Կ. Պոլսոյ
ՄԱՂԱԿԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ, Նոյ. 20

Մեծ աշխատութիւնով յաջողեցաւ միացնել տեղիս Թիւրքերը, քիւրդերը և քրիստոնեաները։ Առաջին փորձը կատարուեցաւ ամսիս 16ին (ն. տ.) շաբաթ օրը, կէսօրէն վերջը, Թրքական ժամը 9½-ին։ Քաղաքիս բոլոր մահմեդական էշրէֆները (պատուաւոր դասակարգը), աղաներ, պէկեր, հօճաներ, իւլէմաներ, միւֆթի և այլն. շրջապատած քաղաքին „փէխասներէն“ (անվարտիները), յարձակեցան վալիին, Ալթա պէյի, տան վրայ, որ ամիսներէ ի վեր հիւանդ պառկած, ոչ կը հրաժարի ոչ ալ գործի կը նայի։ Պահանջեցին որ վալին անկողնէն ելլէ և հեռագրատուն երթայ իրենց հետ միասին, երկրին անկարգ, անապահով ու անիշխանական վիճակի մասին, համիդիէներու երեսէն, հաղորդեն սուլթանին, ապա թէ ոչ կսպառնան զինքը սպաննել։ Վալին կաղերսէ, կը պաղատի որ չսպաննեն զինքը, և իր անձնական կնիքը յանձնելով միւֆթի Սուրհի խոճային, այս վերջինը իրեն պաշտօնական փոխանորդ կը նշանակէ։ Սակայն էշրէֆները վալիին ծածկագիրը կը գտնեն և բազմութեան առջևը ինկած՝ առօք փառօք հեռագրատուն կերթան և անկէ պաշտօնեաները վռնդելով հեռագրական թելերը ձեռք կառնեն, և կսկսին խառնիխուռն և անկապ լեզուով ու ոճով հեռագիրներ տալ սուլթանին, նախարարներուն և զանազան կողմեր, նկարագրելով երկրի անկերպարան վիճակը և մանաւանդ համիդիէներու հարստութիւնները ու չարիքները։ Մինչև օրս 15 հեռագիր տրուած են, մօտ 200 ոսկիի արժէքով։ Եըլդըզը, Թահսին և Սէրասքէր փաշաներով ցարդ չէ կրցած ամբոխին խօսք հասկցնել և հեռագրատունէն հեռացնել։

Ամբոխը կը պահանջէ Իպրահիմ փաշայի պաշտօնանկութիւնը և աքսորը, եթէ իշխանութիւնը չհամակերպի իրենց, կսպառնան գրաւել երկրագործական պանքան, կառավարութեան գանձարանը, զինարանը։

Շնորհաւորութեան արժանի կէտը այն է որ իսլամները շատ բարեկամական աչքով կը նային քրիստոնէից վրայ։ „Փէխասները“ կը պաշտպանեն շուկան յարձակումէ և անկարգութենէ. միայն շաբաթ օր էր որ շուկան գոցուեցաւ մօտ 2½ ժամի չափ։ Տեղական իշխանութիւնները լուռմունջ և ահաբեկ, սպասողական դիրքի մէջ են։ Քաշուած 15 հեռագիրներուն երկու կարևորները ստորագրած են նաև բոլոր քրիստոնեայ հասարակութեանց կրօնական պետերը, միութիւնը չխանգարելու համար։

ՍԻՒՐԻԱ, Նոյ. 4

Հացի սղանալու պատճառով, Հալէպի ժողովուրդը, ինչպէս Թիւրքիոյ ուրիշ շատ մը քաղաքներու մէջ, ոտքի ելած վաճառատուները և ցորենի ամպարները թալանի տուած է. մասնաւորապէս հայ տարրը ահուդողի մէջ է. քիչ բացառութիւնով շուկայի բոլոր խանութները փակուած են։ Կառավարութիւնը անզօր է երկիրը խաղաղացնել։ Շամի բանակէն նոր զօրքեր պահանջուած են, երկուստեք բազմաթիւ վիրաւորներ կան։ Կիները ևս մասնակցած են ամբողջ թալանին։ Նախապէս փոթորիկը սկսելէ առաջ, չորս հարիւրէ աւելի կիներ խումբ-խումբ կը դիմեն Հէմիզիէ (Հալէպի մէկ թաղը) ուր պաշարելով վալի փաշային քօնաղը, կըսկսեն քարկոծել և տան բոլոր լուսամուտները կը փշրեն։ Միևնոյն ատեն տղամարդիկ յարձակում կը գործեն երկաթուղիի կայարանի վրայ, ուր վակոններու մէջ զետեղուած դուրս դրկուելիք մեծաքանակ ցորենի և այլ ապրանքներու հակերը դաշոյններով կը պատռտեն և ցորենները դուրս կը թափեն և կսկսեն կրել։

Հացի գինը երթալով կը բարձրանայ. լիդր մը հացը կը ծախուի հիմա 1½ դահեկանի, ալիւրի լիդրը ամենէն աժանը 4½ է, իսկ ցորենին զամբիւղը կը ծախուի 150 –160 ղրշ։ Դուրսէն վաճառականներուն հրահանգ կայ, որ մինչև 200-ի բարձրացնեն։ Ժողովուրդը խեղճ է և անօթի։ Թալանը միակ փրկութիւնն է իր սովամահ եւութիւնը պահելու համար, այսպիսի անկարգ, անօրէն երկրի մը մէջ, որ կը կառավարուի աւազակներու ձեռքով։

Երկրին տնտեսական այս ահարկու տագնապը շատ մը տեղերու մէջ հետևանքները ցոյց կուտայ արդէն։ Աղքատիկ քաղաքներու մէջ մանաւանդ շատ աւելի ծանր է կացութիւնը։ Երկրի ժողովուրդը հիմա ամէն բան մոռցած հացի համար կը մտմտայ։ Շահ չը կայ, հաց չը կայ։

Նոյ. 27

Տիգրանակերտի շարժումը իր նպատակէն շեղեցաւ հէնց առաջին քայլէն և սկզբնաւորութեանը մէջ։ Որովհետև նպատակ կար ընդհանուր շարժում առաջ բերել ամենօրեայ հարստահարութիւններու և կեղեքումներու ինչպէս նաև կառավարական զեղծումներու դէմ։ Սակայն շարժումը սկսելու նախաքայլին մէջ, Թիւրք ազատականները երբ տեսան որ էշրէֆներն ու մեծամեծները կը վախնան անմիջական խոշոր քայլ մը առնելէ, խիստ ճարպիկութեամբ խնդիրը նետեցին, համիդիէ լիվա Իպրահիմ փաշայի վրայ, որուն հետեւող քիւրդ աշիրէթները ալանթալան ըրած էին էշրէֆներու և մեծամեծաց սեփականութիւնն եղող կարգ մը գիւղերը։ Յաջողութիւնը անտարակուսելի եղաւ։

Առիթէն օգուտ քաղելով մզկիթներու և հանրային վայրերու մէջ, յատուկէն քարոզներ և բանախօսութիւններ եղան սապէս, „թէ պէտք է սիրել քրիստոնեաները իբրև եղբայրներ և հայրենակիցներ, միևնոյն իրաւունքներու համահաւասար ընկերներ սեպելով, պէտք է անոնց հետ ներդաշնակ և միաբան գործել“ և այլն։ Ջերմ գովասանքներ ևս եղան հայոց մասին, ըսելով „անոնք խելացի և գործնական մարդիկներ են.

15 տարի առաջ անոնք զգացին և հեռատեսեցին երկրին կործանումը, իշխանութեան զեղծումի և անհաւասարութեան վնասակար սկզբունքին երեսէն, ուստի բողոքեցին, բարեկարգութիւն ուզեցին երկրին համար։ Բայց մենք մոլեռանդութիւնով կուրցած չը հասկցանք և կոյր գործիքը եղանք անմարդասէր իշխանութեան ձեռքը։ Ցաւալի բարբարոսութիւնով մը 12 տարի առաջ ընդհանուր ջարդ մը տուինք անոնց որոնք մեր բարերարներն ու երկրի բարեկարգիչներն ըլլալ կը ձգտին ազնիւ սրտով ու խորհրդով։ Մենք ուշ, շատ ուշ մեր դրացիներու, հաւատարիմ բարեկամներու հետ աւրուելէ, անոնց մարդասպաններն ըլլալէ յետոյ, արթնցանք։ Սակայն մարդ իր սխալները տեսնելով երբ ուղղելու ըլլայ առաքինութեան հաւասար գործ մընէ, Հայերուն և բոլոր քրիստոնէից առաքինութիւնը յայտնի է, եթէ մենք մեր ձեռքերը երկարենք՝ անոնց գիրկն ու սիրտը բաց է ներողամտութենով մեզ ընդունելու և մեզի հետ միանալու"։ Այս և ասոր նման պերճախօս ճառեր ոչ նւազ իրենց խաղաղարար արդիւնքը ունեցան։

Պէտք է ըսել թէ քրիստոնեաները, մասնաւորաբար մեր առաջնորդը Էշեկիէլ վարդապետ Արշակունին, միութեան խնդրին առթիւ շատ դժուարութիւններ հանեց։ Վերջապէս ծայրագոյն ջանքերով և մինչև իսկ սպառնալիքով, կարելի եղաւ, համոզել և իրրև առաջնորդ հայոց իր կնիքը դնել տալ սուլթանին ուղղած երկու ամենակարևոր հեռագիրներուն տակ, ուր կը պարզի երկրի անելանելի դրութիւնը հարստահարութիւնները, աւերաւերումը, ժողովրդին աղքատութիւնը պաշտօնէից զեղծումները, որոնք անհանդուրժելի ըրած են խաղաղ և աշխատասէր ժողովրդի կեանքը։

Սոյն անիշխանական վիճակը լման 11 օր տևեց, որ ատեն հեռագրական ամէն յարաբերութիւն խզած էր և կառավարութիւնն ալ գործելէ դադրած։ Ամբոխը իր մէջէն ընտրեց մարդիկ որոնք պէտք եղածին պէս հեռագրեցին Եըլդըզ։ Հիւպատոսներու հեռագիրները մերժելու անխոհեմութիւնը չը գործեցին։

Եըլդըզի պալատը ամբոխին սպառնալիքներուն տակ միայն քիչ զիջաւ։ Երէկ թրքական ժամը 9½-ին, ներք. գործոց նախարարապետ Մէհմուտ փաշան հեռագրով կը բացատրէր թէ վեհ. սուլթանի փափաքն է որ կարգ կանոնը վերահաստատուի և ապահովութիւնը տիրէ, կը յայտարէր նաև վալիին պաշտօնանկութիւնը և Մուսուլի վալի Մուստաֆա պէյի, (սուլթանի բ. քարտուղար արաբ Իզզէթ փաշայի եղբօր), Տիգրանակերտի վալի Նշանակուած ըլլալը։ Կաւելցնէր թէ, Իպրահիմ փաշան առժամապէս Հալէպ պիտի երթայ և հոն սպասէ մինչև որ Պօլսէն ճամբայ ելլելիք երկու փաշաներ և 4 երևելիներ ալ Սիւրիոյ Համաքաղաքէն հոս հասնելով եղած բաները քննեն և եթէ հաստատուի որ Իպրահիմ փաշան յանցապարտ է պիտի աքսորուի Եայլն։

Իզզէթ փաշայի եղբօր հոս գալը իբր վալի, կանխապէս քայլ մըն է, հաշտութիւն հաստատելու Իպրահիմ փաշայի և տեղիս էֆէնդիներու միջև։ Թերևս այդ բանը յաջողի, սակայն ակներև է որ բուժիչ կարգադրութիւն մը չէ։

Զարկը արդէն տրուած է և թիւրք ժողովրդին տրամադրութիւնը, գոնէ երևոյթէն, բոլորովին փոխուած կերևայ։ Այս վերջի շարժումը աւելի քան ոևէ գրաւոր փրոփականդ ցնցեց ժողովուրդը որ աւելի յեղափոխական փորձառութիւն և համ ստացաւ։ Ցէրութեան և իր ժողովուրդին մէջ անդունդը զգալիօրէն կը լայնայ։ Ազգութիւններու մէջ սերտ միութեան մասին, թիւրքերու կողմէ ջանքեր չեն խնայուիր։

Խլրտումը հանդարտած և կեանքը նորմալ վիճակ մը ստացած է։ Ամբոխը երէկ սկսաւ ցրուիլ և իր առօրեայ գործերով պարապիլ... Մինչև ցնոր տնօրինութիւն։

ԿԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՍԿԱՍՏԱՆ.—Հիշդ այն պահուն երբ Պարսկաստանը նոր շունչով ոգևոր, ազատական ռէժիմի մը հիմերը կը ձգէր, հին կարգուսարքերը յեղաշրջելով, Անգլիա և Ռուսիա իրենց „ասիական թիւրիմացութիւններուն" վերջ մը դնելու համար կը պայմանագրէին—կամ կը դաւադրէին—Իրանը բաժնել ազդեցութեան կամ տնտեսական շրջանակներու։ Ռուսիա կը թաթէր Իրանի հիւսիսային և մեծագոյն մասը, Անգլիա հարաւային ծովեզերեայ մասը, „թեթև հող մը", ինչպէս արհամարհով կըսեն անգլիական թերթերը, որով կը պահէ Պարսից ծոցի գերակշռութիւնը և Պաղտատի երկաթուղիի բանալին։

Պարսիկները իրենց համակրելի ժէստին մէջ, որով դարերու ստրկութիւնը դէն շպրտեցին, տրտում և վհատ նախազգացում մը ունին, որ Իրանի նորածին ազատ շարժումը մի գուցէ արիւնը մէջը մեռնի, զի ռուսական էնդրիկները և գիտումները բաց գաղտնիք մընեն իրենց համար, և այդ դաշնագրութիւնը կը սահմանկեցնէ զիրենք, երբ կը տեսնեն որ „կէտը" և „փիղը" իրենց կռնակին վրայ կը հաշտին։

Մէճլիսը և պարսիկ մամուլը բուռն կերպով կը բողոքեցին այդ դաշնագրին դէմ, որ „համազօր կը նկատեն երկրի բաժանման և ձեռնձգութիւն մը Պարսկաստանի անկախութեան դէմ". „Լաւ է, կըսէ Հապլումէթին թերթը, մեռնինք քան թէ հանդիստ ապրինք ռուս և անգլիական հովանաւորութեան ներքև. հովանաւորութենէն յետոյ պիտի գայ կեավուրներու կողմէ գրաւումը։ Այն ատեն մեր մզկիթները ժամերու պիտի փոխուին, մեր դպրոցները վատահամբաւ տուներու, մեր աղօթատեղիները գինետուներու և Դուրանին պիտի յաջորդեն Հնգամատեանը և Աւետարանը"։

Գիտակցութիւնը որ կը շեշտի Թէհրանի որոշ խաւերու մէջ, զերծ չէ դեռ անցեալի ստերէն։ Հապուլումէթինի ոգին արժանի է համակրանքի, երբ իր լեղի հացը կը նախընտրէ օտարին լուծէն, հոս ազգային և մարդկային արժանապատուութենն է որ կը խօսի, բայց գործին մէջ մոլեռանդութիւնը խառնել, արեւստականօրէն հայրենասիրական շարժում մը ստեղծելու համար, առաջդիմութեան անիւը ետ մղել ըսել է, և թելադրել նորազատ ժողովրդին պ ա ս տ մտնել միւճթէհիտներու, թեւարկութեան տակ ուրկէ հազիւ ազատագրած էր։

Իրանի միտքը հնուց ի վեր է որ յղացաւ աշխարհի պատմութիւնը, իբր բնաշրջումներու շարք մը, կամ հազարամեակը—հէզարը—դէպի բարութեան, արդարութեան թագաւորութիւնը, պատրաստելու համար Ոսկեղէն դարը, ինչպէս կըսէ Ռընան, երբ երկիրը պիտի դաշտանայ, մէկ լեզու, մէկ օրէնք, մէկ կառավարութիւն պիտի ըլլայ։ Այո, Իրանը պէտք է վերսկսի, բարոյական արմատական յեղափոխութիւնով մը, այդ համամարդկային ոգով չափել իր պատմական ուղին, պէտք է պարսիկ ժողովուրդը խմորել առողջ և ապրող ու կենսատու սկզբունքներով, սրտի և մտքի մեծ հոսանքներով, կենդանացնելու համար իր „դաշտի նաիւմիտ“-ները, յուսահատութեան դաշտերը—աշխարհագրական և մտաւորական, ուր խաւարը և բռնութիւնը կը թագաւորեն, որպէսզի Իրանը ատրուշան մըլլայ Ասիոյ սարահարթին վրայ։

Սահմանադրութիւնը հաստատուեցաւ. ժողովուրդը խանդավառութիւնով դիմաւորեց ազատական ռէժիմը. „շէհիտներու“ և ազգային հերոսի կարգը դասեց Աբբաս Աղան՝ որ սպանելով Աթապէկ ազամը, իբր թշնամի „մէշրութային“—սահմանադրութեան, անձնասպան եղաւ, և անոր գերեզմանը Իրանի ամենագեղեցիկ ծաղիկներով ծածկեց։ Այդ մեծ անձնուիրութիւնը ազատութեան գաղափարին համար, պատկառելի ըրաւ ֆէդային, որը կառավարութիւնը չհամարձակիր գլխատել այլևս։ Անոր մահուան „քառասունքին“ (էրպային), երբ հազարաւորներ գացին գերեզման անոր յիշատակը յարգելու, ազատամիտ պարսիկ մը ճառախօսեց, „ո՞վ Իրանի զաւակներ, ըսաւ, դուք եկաք հոս ողբալու ազգային հերոսը կամ հռչակելու անոր մեծագործութիւնը։ Այս վեհ հոգին այժմ մեր քով, երկրի վրայ չէ, բայց մեզի կը խօսի ան, թէ ինչպէս պէտք է ազատել բռնակալներէն։ Անոր գերեզմանը կաղերսէ ձեզի անոր օրինակին հետևիլ։ Ամէն երիտասարդ ձենէ պէտք է դէն շպրտէ, միևնոյն ճամբուն վրայէն, ամէն բան որ խոչընդոտ է մեր ազգային ազատութեան և յառաջադիմութեան“։

Մէճլիսը իր կողմէն, կրցաւ Իրանի ժողովրդին մէջ գտնել բաւական լուսամիտ ուժ, կտրել անցնելու ամէն հոգևոր ու մարմնաւոր խոչընդոտներ, և մղել Իրանը քաղաքակիրթ ազգերու մակարդակին վրայ։

Սահմանափակելով Շահի իշխանութիւնը, անոր յատկացուց տարեկան թոշակ 500,000 թուման (2,500,000 ֆր.), և երկրին համար օրինական պիւդճէ մը մշակեց ուրկէ գրեթէ զուրկ եղած է Իրանի շուայլ և անհաշիւ կառավարութիւնը, վախնալով որ իր... գանձին „պէրէքէթը“ կերթայ։ Երկու հազար հոգիի թոշակը կըտրեց և ատկէց մօտ 20 միլիոն ֆրանքի խնայողութիւն մ'ըրաւ հանրային գանձին։

Սակայն երկիրը խաղաղած չէ, անկարգութիւնները և անիշխանական դրութիւնը և խուլ դաւադրութիւնը Սահմանադրութեան դէմ կը շարունակուին. յեղափոխականները, որոնք արթուն կը հսկեն իրենց մանուկ Սահմանադրութեան վրայ, կը մեղադրեն Շահը իբր մեղսակից, որ կը ջանայ տապալել և անվարկել Մէճլիսի հեղինակութիւնը և վերահաստատել հին ապերասան ռէժիմը։ Ժողովրդին մէկ մասը կը պահանջէ գահընկէց ընել Շահը։ „Թայմզ“ կը հաղորդէ որ, Ամաճադէլ Մուլք իշխանը խօսելով արքայական մզկիթին մէջ ըսած է, „ո՞վ թէհրանի ժողովուրդ, ներկայ դըժբախտութեանց պատճառը ան է որ քեզ կը կառավարէ Մուլայի Ալի Շահը։ Եթէ կուզես երջանիկ հայրենիքի մը մէջ ապրիլ վար առ այս ինքնակալը և ուրիշ մը դիր տեղը“։ Իշխանը յայտնեց նաև որ օրէ օր ռուսական ինդրիկները կը մեծնան մայրաքաղաքին և արքունիքին մէջ։

Ուրեմն Պարսկաստանի դրութիւնը ոչ միայն չէ պարզուած, այլ աւելի կը կնճռուի ռուսական երկիւղով որ Դամոկլէսի սուրին պէս կախուած է երկրին վրայ։ Մէճլիսը ոտքին տակ հող չունի, իր զօրավիգ ուժը շատ ցիրցան է, յեղափոխական գիտակցութիւնը, ինչքան ալ անկեղծ, և անձնուէր ըլլայ, անզօր է լուրջ բարդութիւններու դիմագրաւել, երբ իր կառավարութիւնը դաւաճանելով՝ արտաքին միջամտութեան մը վրայ կռթնի։ Թուրքերը որոնք սահմանագլխի կատակդերը կը խաղան, չեն ուզեր դուրս ելլել իրենց գրաւած հողէն, պարսկական Քիւրդիստանէն, ուր իրենց միացած կարգ մը ցեղապետեր ամբողջ գեղերը թալանի կուտան և արդէն մօտ են Զօլա գետի սահմաններուն և կը սպառնան Սալմաստին։ Թիւրքական այդ արշաւանքը, որուն Ռուսիա և Անգլիա կէսբերան դիտողութիւններ միայն կընեն, հոգ կը պատրաստէ ապագայ միջազգային բարդութիւններու, պատրուակ ծառայելով, մասնաւորապէս Ռուսիոյ ձեռքին, որուն քաղաքական յետին մտքերը օրէօր բացայայտիկ կըլլան մասնաւորապէս դէպի թոյլ Պարսկաստանը ուր իր պոլիպօսի թաթերը երկնցուցած է ամէն կողմ և ընդհանրապէս մօտ-արևելեան երկիրները։ Միացեալ նահանգները, Ուրմիոյ մէջ իրենց միսիոնարական շահերը նկատի ունենալով, Պոլսոյ դեսպանին Լայշմանի բերնով իրենց ձայնը լսելի ըրած են, որ Ուրմիան պէտք է դուրս մնայ թրքական արշաւանքէն։ Թիւրքիան երդում պատառ եղած է Ուրմիոյ չը մօտենալ, թէ ինք, ո՞վ հեգնութիւն, դէն պիտի չանցնի, կէս դարէ ի վեր դաշնագրով ճանչուած սահմանաբաժնէն որուն վրայ Պարսկաստանը անիրաւօրէն... նստած էր։

Մէճլիսը լաւագոյն սկզբունքները կը վիճաբանի և կը մշակէ իր երկրի բարօրութեան և անդորրութեան համար, որուն ետև կանգնած է յեղափոխական տէօրը, միւս կողմէ յետադիմական խուլ ուժերը սկսած են գլուխ բարձրացնել և երկրի վիճակին անկերպարանութիւնը յաւերժացնել։

Պարսկաստանէն հասած վերջին լուրերը շատ տագնապալից են, արդէն արիւնի և յեղափոխութեան հոտ սկսած է գալ։ Շահը, պետական հարուածով մը ուզեր է լուծել Մէճլիսը, բանտարկել նախարարները, աքսորել ազատականներու պարագլուխները և սահմանադրութիւնը ոչնչացնելով վերահաստատել հին ռէժիմը իր բոլոր կամայականութիւններով և զեղծումներով, թէև հաւատարմութեան երդումը կերած էր։ Ահագին տակնուվրայութիւն Թէհրանի մէջ։ Ազատականները և յետադիմականները (միլլէթի և դէվլէթի). իրարու գնդակ կը նետեն մէկը սահմանադրութիւնը պաշտպանելու համար, միւսը Շահի և յետադէմ խաներու և պաշտօնեաներու փտած և ապական ռէժիմը։ Մօլլաները որոնք սկիզբէն ներկայ շարժման „փէշէնկները“ եղան, և աղմկալից ցոյ-

ցերով „պաստ“ մտան մզկիթները տեսնելով կղերական ազդեցութեան տժգունիլը, սահմանադրական ըէժիմին մէջ, փոշիման եղած են և կուզեն ետ հրել յառաջադիմական հոսանքը, բայց իզուր։

„Թայմզ“ օրը օրին զեկ պահելով Թէհրանի անցուդարձի մասին, ցոյց կուտայ որ Իրանի մայրաքաղաքին մէջ դրութիւնը շատ լուրջ է և իր թղթակիցը շատ լաւատես չէ։ Շահը ձերբակալել տուեր ազատամիտ նախարարութեան երեք անդամները. շուկան փակուած, պալատը, դեսպանատունները պահպանութեան տակ են։ Մայրաքաղաքին մէջ յուզումը և գրգռումը աննկարագրելի է։ Մէճլիսը գրաւոր բացատրութիւն պահանջեց Շահէն իր անսահմանադրական ընթացքին համար ինչպէս նաև պահանջեց որ իսկոյն հեռացնէ իր քովէն սահմանադրութեան թշնամիները որոնցով շրջապատուած է և որոնց թելադրութիւնովը կը գործէ։ Շահը մերժեց ընդունել Մէճլիսի խնդիրքը։ Խուժանը լեցուած է քաղաքը և կըսպասի նոր արիւնահեղութիւնների։ Յետադիմականները շրջակայ գեղերէն տգէտ և մոլեռանդ սրիկաներ հաւաքած են քաղաքը, որոնք շատ մը սպաննութիւններ և թալաններ գործեցին, լամուկներ փողոցները ինկած կը պոռան „չենք ուզեր սահմանադրութիւն“, իսկ ազատականները պատնէշներ կանգնած, Պահարիստանի շուրջը պաշտպանողական դիրք բռնած են և ոչ մէկ անկարգութիւն չեն ըներ։ Եթէ ժողովուրդները յեղափոխական դասեր կառնեն իրարմէ, նոյնը և բռնակալները կընեն իրարու օրինակին հետևելով։ Ցարը, այս պարագային դաստիարակն է Շահին, ինչպէս սուլթանը ցարին ա-նոր ժողովրդասպան քաղաքականութեան մէջ։

Անգլիական դեսպանը իմանալով որ նախարարապետին կեանքը վտանգի մէջ է իսկոյն ղրկեց իր թարգմանը և Նասր-էլ-Մուլքի ազատումը պահանջեց։ Նախարարապետը ազատուելով աքսորուեցաւ Եւրոպա, իսկ իր երկու եղբայրները Էրդէպիլի պետական բանտը ղրկուած են։

Մէճլիսը Պարսկաստանի ժողովրդին անունով երկար յայտարարութիւն մը ղրկեց պետութիւններուն սա մտքով։ Ազգը, երկրի յուսահատական վիճակի մէջ, կառչեցաւ սահմանադրութեան. թէ Շահը, հին բռնակալ ըէժիմի մարդոց յարած իր սահմանադրական ուխտը կը դրժէ՝ թէ ժողովուրդը մինչև վերջը պիտի պաշտպանէ իր միակ յոյսը, սահմանադրութիւնը։ Իվերջոյ Մէճլիսը կոչ կընէ բոլոր ազգերու եղբայրական զգացումին խնդրելով թոյլ չտալ որ տասը միլիոն պարսիկներուն իրաւունքները ոտնակոխ ըլլան։

„Թայմզ“ մասնաւոր առաջնորդողի մը մէջ կընդունի որ Թէհրանի մէջ յեղափոխութիւն է ծագածը, որուն դիմաց կայ անկարող գործադիր իշխանութիւն մը որ անընդունակ է լաւ բան մընելու և արքունիք մը որ չարիք ընել գիտէ միայն... Ներկայ կացութեան մէջ խառնուած են դասակարգային շահեր, կղերական ազդեցութիւն, մասնաւոր փառասիրութիւններ, անձնական յոյսեր և երկիւղներ, նախանձներ։

„Ոչ ուրեք առաջնորդող աստղը, որ հաստատ ուղղութիւն մը տայ։ Պարսկական պետութիւնը կը քայքայուի“։

Ռուսական կարևոր թերթ մը կըսէ „Պարսկաստան չորս ժամ բուն բերանն է, եթէ Շահը յետադէմ ուղիին մէջ մտնէ, երկրին մէջ քաղաքային կռիւն է որ պիտի սկսի, որուն հետևանքը պիտի ըլլայ երկրին կործանումը“։

Ահա այն յոռետես և չարագուշակ ենթադրութիւնները որ կը թելադրէ Պարսկաստանի ներքին վիճակը։ Այս յետադէմ և խաւար ուժերը նոր զարթ և գրգիռ ստացեր են, չեն հանդուրժեր որ դարերու ստրկութեան տակ կորաքամակ և արիւնամեռ պարսիկ ժողովուրդը, մարդկային տարրական իրաւունքներու գիտակցութիւնը ունենայ։ Սակայն Շահը որ զուրկէ կազմ բանակէ և քաղաքական ջիղէն, դրամէն, չպիտի կրնայ դիմագրաւել յեղափոխութեան, որով պարսիկ ժողովուրդը տոգորուած է և որ ընդունակ ցոյց տուաւ ինքզինք մարդկայնական ազնիւ և ազատական սկզբունքներու։ Սահմանադրական կարճ ժամանակամիջոցը բացաւ աչքերը ժողովրդին, որուն մէջ կան անթիւ գաղտնի ընկերութիւններ, որոնք պատրաստ են յանուն սահմանադրութեան և ժողովրդական իրաւունքի, ահաբեկութիւնը վերահաստատել և իրենց մարդկային իրաւունքները պաշտպանել։

Ռուսիա և Անգլիա համաձայնած են, միջոցներ ձեռք առնել, իշխարկին գործելու համար, ինչպէս երկու աւազակներ։ Սակայն Անգլիոյ արտ. գործ. Նախարարը՝ իր նոր ճառին մէջ յայտարարեց թէ, պարսիկներուն՝ իրենց ձգելու է իրենց սեփական գործերը կարգադրելու հոգը, որքան ատեն թշնամական դիրք չեն բռներ անոնք դէպի օտարները։ Ահա ամենայարմար քաղաքականութիւնը. անգլիական տեսակէտով, որուն ձայնատարը կը հանդիսանայ Սըր Էտուար Կրէյ։

Շահը դաւադրութեան մէջ յուսախաբ, և ժողովրդի հզօր և վճռական դիմադրութեան զարնուած, տրամադիր է իրաւախոհութեան գալ ժողովրդական ներկայացուցիչներուն հետ. սակայն Մէճլիսը ազատականներու յարաճուն բանակին վրայ կռթնած ամէն բանէ առաջ կը պահանջէ, ուրիշ կարգ մը գոհացումներու հետ, արտաքսումը երկու յետադիմական պարագլուխներու։ Յետադիմականները արդէն հող չունին ոտքերնուն տակ և կորակոր տեղի կուտան։ Երկրին գլխաւոր քաղաքներէն համակրանքի և աջակցութեան հեռագիրներ կը դողան Մէճլիսին։

Մէճլիսին անխռով ընթացքը և ազգայնականներու հաստատամտութիւնը պարզապէս հիանալի են։ Անցած են այն արհաւրալից օրերը երբ, կըսէ պարսիկ առակ մը, „Շահերը կը ժպտէին միայն իրենց առիւծի ատամները ցոյց տալու համար“։

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԼԵՀԵՐԸ

Իշխան Պիւլօվ, Գերմանիոյ նախարարապետը, որ միաժամանակ պրուսական խորհրդարանին պետն է — որպէսզի, որքան հնար է, ներդաշնակութիւն մը պահպանի կայսրութեան և գերմանական դաշնակցութեան գլխաւոր պետութեան միջև — Նոյեմբեր 26-ին Բրուսիոյ Լանտթակէն խնդրեց 500 միլիոն ֆրանքի նոր գումար մը, պրուսական Լեհաստանը գերմանացնելու համար։ Որովհետև լեհերը, հայրենասիրական յամառութիւնով մը, չեն ուզեր գերմանանալ, ընդհակառակ

կը կը լեհացնեն գերմանները, գերմանական կառավարութիւնը և համագերման ազգամոլները, կատղած են որ այդ սլաւները չեն ուզեր համակերպիլ և ձուլուիլ գերմանական քաղաքակրթութեան։ Իշխան Պիւլով կը յայտարարէ որ ինք հաւատարիմ կը մնայ Պիզմարքեան մէթոտին թէ „ուժը կը գլէ իրաւունքը“, թէ լեհական մեծ քաղաքներու շուրջը պէտք է ստեղծել գերմանական գիւղեր... թէ ինք պայքարը կը մղէ ամբողջ գերման ազգի շահուն համար, թէ պէտք է „սեփականազրկումի օրէնքը“ քէէարկել...։ Շատ չըներ, գերման նախարարապետը միամիտօրէն կը գանգատէր թէ լեհացիները ճագարի պէս կը շատնան։

Քսան և հինգ տարի է, որ գերմանացումի արշաւանքը սկսած է։ Բրուսական Landtagը 100 միլիօն մարք, քէէարկած էր լեհացիներու կալուածները գնելու և անոնց տեղերը գերման գաղութներ հաստատելու համար, որոնց, գերման կառավարութիւնը, ամեն առաւելութիւն կընծայէր, փոխդրամ, նպաստ, վճարումի դիւրութիւն և այլն և այլն։ 1894ին հիմնուեցաւ „միութիւն“ (ligue) մը, Hakatistesներու—իրենց հիմնադիրներու անունով—որ նպատակ ունէր լեհական հողերը գերմանացիներու ձեռք անցնել, և ի հարկին բռնի սեփականազրկել զանոնք։

Սկիզբները թուեցաւ թէ կը յաջողէր ձեռնարկը։ Լեհաստանի մէջ բազմաթիւ լեհ կալուածատերէր փլան և ստիպուեցան իրենց հողերը ծախել, բայց, շուտով, նկատեցին որ յամրօրէն կը մարին, խելքի եկան և կազմակերպուեցան։ Կազմեցան կոմիտէներ իրենց կարօտ հայրենակիցներուն օգնելու համար, լեհական պանքաները հայրենասիրական համերաշխութիւնով մը, ծախու կալուածները գնեցին հոն պահելու համար լեհացի վարձակալները և ի հարկին անոնց վրայ լեհեր բնակեցնելու համար։ Հողի գները սկսան բարձրանալ։ Լեհական նահանգներու մէջ բնակ բրուսիացիները, շահելու առիթ համարելով, հետզհետէ ծախեցին իրենց հողերը։

Բրուսական կառավարութիւնը իր կոպիտ ընթացքով ամբողջ լեհերու ազգային զգացումը ոտք հանեց և մղեց զանոնք սեղմել իրենց շարքերը և ինքնապաշտպանուիլ։ Ի զո՞ւր բրուսիական կառավարութիւնը 1903ին 100 միլիօն մարքի նոր վարկ մը քէէարկեց, իզուր „բացառիկ օրէնքներ“ հաստատեց, ի զո՞ւր Պոզէնի մէջ գերմանական համալսարանը բացաւ, ի զուր պրուսացի պաշտօնեաները, մասնաւորապէս վարժապետները, մանաւանդ Կնիզէնի, Կոսթէնի, Սլուսի մէջ, կրկնապատկեցին իրենց խստութիւնները, արմատախլելու երկրի լեզուն և անոր տեղը դնելու գերմանականը։ Լեհացի լաճերը, հակառակ դաժան պատիժներու, չէին ուզեր իրենց կրօնագիտութիւնը գերմաներէն լեզուով ըսել և դպրոցական գործադուլը սարքեցին։ Այդ գործադուլները այնքան մէթոտիկ կերպով սարքուած էին, որ կառավարութիւնը շարած էր։ Հոգևորականութիւնը մեծագոյն դերը էր ազգային լեզուի պահպանման և դիմադրութեան։ Գերմանական „ներքին գաղթագործման“ սնանկութիւնն էր։ Ցէլպրիք, գերմանացի պատմաբանը, կըսէր այդ առթիւ, „Իշխան Պիւլովի գերմանացումի քաղաքականութիւնը Լեհաստանի մէջ լիակատար ձախողութիւն մ՚եղաւ, և եթէ այսպէս շարունակուի, ի վերջոյ այդ նահանգները ամբողջովին պիտի լեհանան։ Մարդ միշտ անիրաւ է երբ կը դիմէ բռնութեան“։

Անցեալ տարի Gazette nationale տեսնելով լեհական յամառ դիմադրութիւնը և իրենց սլավոնական զգացումի զարթնումը, զայրացած կը գրէր. „ինչպէ՞ս այդ ժողովուրդը կը մոռնայ այն ամէնը, որ կը պարտի Բրուսիոյ քաղաքակրթական և տնտեսական հոգածութեան։ Ինքնապահպանութեան մտահոգութիւնը, պէտք է թելադրէ երեք կառավարութիւններուն, որոնք բաժանեցին Լեհաստանը, համանուագ միջոցներ ձեռք առնել յաղթուած և անդամատուած ժողովրդի անկախութեան կամէութիւններուն դէմ։ Անոնք կերազեն դաշնակցիլ մեր թշնամի սլաւներուն հետ“։

Հարահատ, Պիւլովի կառավարութիւնը կորովի միջոցներ կը փորձէ, այն է, ոչ թէ ծախու հողեր գնել, այլ պարզապէս բռնի սեփականազրկել և յափշտակել Լեհացիներուն պիտի ըսեն, „առէք սա դրամը. կորսուեցէք, այս տունը, այս արտերը որ ձեր հայերերուն կը վերաբերէին դարերէ իվեր, այժմ մերն են“։ „Քաղաքականօրէն և իրաւաբանօրէն ճշմարիտ հրէշութիւն մըն է այդ քայլը“ կըսէ Ֆրանսական մեծ լրագիր մը։

Իշխան Պիւլով, իր այդ հրէշային միջոցները արդարացնելու համար կը յենու պետական իրաւունքին վրայ ըսելով՝ „որովհետև պետութիւնը իրաւունք ունի, ամէն քաղաքակիրթ երկրի մէջ, սեփականազրկել երկաթուղի մը շինելու համար, նոյնպէս իրաւունք ունի դիմել սեփականազրկումի, երբ խնդիրը ազգային շահերուն վրայէ“։ Սակայն Պիւլով, որ այնքան հաստ սրամտութիւն մը ունի, „ազգային շահ“ ըսելով կիմանայ միայն բուն գերմանացիներուն շահը և որկորը, և Գերմանիան, կապացուցանէ որ, սահմանագրական բէժիմ մը, յաճախ պալլատիոն մը չէ որուն տակ հպատակ ազգեր ապահով զգան զիրենք տիրապետող ազգի կամայականութիւններէն և ճնշումներէն, երբ մանաւանդ այդ ազգը զգալի եսամոլութիւնը ունի թէ ինք Եհովայի „ընտրեալ ժողովուրդն“ է։

Ամբողջ գերմանիան մեծամոլութեան ախտով վարակուած է, և չթաքցներ իր գիտաւորութիւնը „սրով“ ճամբայ բանալու աշխարհի մէջ իր զաւակներուն համար, որոնք ամէն կողմ կը ճիւղաւորին։ Կիյոմ արձագանք տալով գերմանական ճակատագրականութեան՝ վերջերս կը պարզէր իր „համաշխարային քաղաքականութեան“ հայեցքը սա խօսքերով, „Գերմանիոյ ապագայ բախտը կը պահանջէ հզօր ծովային ուժ ունենալ։ Գերմանիան պէտք ունի ապահովել առուտրի նոր հրապարակներ իր ճարտարարուեստին համար։ Որովհետև այդ հրապարակները մեծ մասով կիսաքաղաքակիրթ ժողովուրդներէ բնակուած են, հարկ է որ մեր ուժը ցոյց տանք անոնց... Մեր գաղութները պէտք են, մեր յարաճուն ժողովրդին համար, եթէ չենք ուզեր որ մեր քաղաքացիներէն միլիոններ կորսուին...“

Արդեօք այս կիսաքաղաքակիրթներուն մէջ է նաև... Թիւրքիան։ Հէ՞ք Թիւրքիա..

Տնտեսական կոիւը, առևտուրի, ճարտարարուեստի և ժողովրդին ներուժ և արագ զարգացումը, Գերմանիան կը մղեն ամենակոպիտ քաղաքականութեան դիմել։ Անոր գլխաւոր մտահոգութիւնն է իր ծովային ուժը

հաւասարեցնել ցամաքային ուժին։ Գերման կայսրութեան քաղաքական իդէալը երազը աշխարհի կայսրութիւնն է։ Անգլիացիք սկսած են, իսկապէս մտահոգ ըլլալ։ „Մենք կը գտնուինք ամենածանր կացութեան մը հանդէպ, որ երբէք տեսած ըլլանք մեր պատմութեան մէջ..“ կըսէ, անգլիական Fortnightly Review ն։ Գերմանիոյ նաւատորմին աճումը չէ որ Անգլիոյ մտածել կուտայ, այլ այն՝ որ Գերմանիան կարող է իր մարտանաւերուն զօրք բաւեցնել—իր տարբրինակ աճումով, մինչդեռ Անգլիա երկիւղ կզգայ թէ իր մէջ այդ համեմատութիւնը կը պակսի։ Ամեն պարագային մէջ անգլիացիք ոևէ գնով չեն ուզեր Պօսիտոնի „եռաժանին“ ձեռքէ ձգել և „ալիքներու աշխարհավարութիւնը“ յանձնել ուրիշին, ինչպէս գերմանները չեն ուզեր իրենց „սուրը“ ուրիշին յանձնել։ Գերմանական ամբարտաւանութիւնը կը ջղագրգռէ բոլոր ազգերը և քաղաքակիրթ աշխարհի գլխին կախուած է համագերմանական վտանգը, որ երթալով կը ծաւալի և սպառնական կըլլայ ուրիշ ազգերու անձնասիրութեան, անդորրութեան և աշխարհի խաղաղութեան։ „Դեղին վտանգէն“ յետոյ „Գերմանական վտանգն է“ որ Եւրոպայի ազգերու կուրծքին վրայ մղձաւանջի նման կը ճնշէ։

Լեհերու այդ նոր օրինագիծը, որ արհամարանք մըն է, մարդկային տարրական արդարադատութեան և քաղաքակրթութեան երեսին, մեծ զայրոյթ և ատելութիւն առաջ բերաւ աշխարհի բոլոր լեհերուն մէջ։

Աւստրիական Լեհաստանի լեհերը, Գերման ապրանքներու դէմ անողոք պոյքոթ հրատարակեցին, և այդ առթիւ գերման 19 գործարաններ հրման ստացան որ այլևս չեն կարող իրենց ապսպրանք ընել։ Գերմ. հիւպատոսներու դէմ ցոյցեր եղան. Կիյոմի պատկերը, ի վրէժ, այրեցին հրապարակի վրայ։—Վարշաւայի (ռուսական Լեհաստան) մէջ 500 մեծ վաճառականներ և ճարտարագործներ որոշեցին պոյքոթ կազմակերպել գերմանական ապրանքներու դէմ։ Արդէն ֆրանսական, աւստրիական և անգլիական հիւպատոսներուն դիմած են, տեղեկութիւններ քաղելու իրենց երկիրներու համապատասխան տուներու մասին։ Լեհ գիւղացիները նմանապէս, արգելք յայտարարած են գերմանական հողագործական գործիքներու դէմ։

Գերմանացիք կզգան իշխան Պիւլօվի կոպիտ քաղաքականութեան բարոյական և նիւթական հակահարուածը։ Բրուսական landtagը մեծամասնութիւնով մերժեց քէարկել սեփականազրկումի օրինագիծը։ Գերմանական մէկ քանի թերթեր, ներքուստ չհրաժարելով „լեհակեր“ քաղաքականութենէն խորհուրդ կուտան, կառավարութեան գտնել այնպիսի „օրինաձև“ մը, որ փոխարինելով սեփականազրկումի օրէնքը, հակակշռէ լեհական վարարումը։ Կառավարութիւնը ինքն ալ կզգայ իր կերած ապուրին սխալը համաշխարային զզուանք յարուցանելով իր շուրջը և մտադիր է ետ առնել իր չար ծրագիրը, պահելով սակայն 400 միլիոն պիւդճէն, շարունակելու իր ծրագիրը աւելի նազ անարդար ճամբով խելացի յարատևութիւնով մը։

Գերմանական կառավարութեան „Ժողովներու ազատութեան“ նոր օրէնագիծը, որ ներկայացուցած է Ռայխստակի վաւերացումին, „բացառիկ օրէնքի“ կերպարանքը կառնէ լեհերու հանդէպ, երբ կը տրամադրէ թէ գերմաներէն լեզուն պարտադիր պէտք է ըլլայ՝ բոլոր հրապարակային ժողովներու մէջ, այն պատրուակով թէ օտար լեզուները յաճախ կը ծառայեն յեղափոխական փրօփականդի։

Սոյն նոր օրէնքի խստութիւնը և մահացու սլաքները, ուղղուած լեհերուն և անոնց լեզուի դէմ, Ռայխստակի մէջ բուռն հարցապնդումի և վիճաբանումի տեղի տուին, որուն ակներև անիրաւութեան դէմ բողոքեցին գերմանական խորհրդարանի շատ մը անդամները։ Լեհ պատգամաւորները իրենց բողոքը և զայրութը յայտնեցին այն յերիւր զրպարտութիւններուն դէմ—իբր թէ Լեհաստանը անկախութեան կամէութիւններունի – որ գերման կառավարութիւնը կը նետէ լեհացիներու երեսին։ Բոլոր քաղաքակիրթ աշխարհը կը դատապարտէ Բրուսիոյ հակալեհական քաղաքականութիւնը, ըսաւ իշխան Ռածիվէլ։

Ներքին գործոց քարտուղարը լեհացի երեսփոխներու բողոքին պատասխանեց շատ շնական և անիմաստ պատճառաբանութիւնով մը, որ կը յիշեցնէ գայլին և գառին առակը։

„Չէ՞ որ, ըսաւ պետական քարտուղարը, Լեհաստանի մէջ պոյքոթ կընեն գերմանական ապրանքները.. անհաւատարմութեան և ինքօրէնութեան ապացոյցը չէ՞, սա...։ Երկու տարի առաջ չէ՞ր որ լեհական լրագիր մը կը գրէր թէ Լեհաստանը այն ատեն հանգիստ կըլլայ երբ Պրուսիան իր ցուշիման ունենայ... Չէ՞ որ լեհական մամուլին մէջ, Բրուսիոյ դէմ ատելութիւն կը հոտի... և այսպէս տղայամտութիւններ պետական անձնաւորութեան մը բերնին մէջ՝ փոխանակ ուղղակի ըսելու „այո՛, պարոն լեհեր, իրաւունքը հզօրինն է. այս է Գերմանիոյ քաղաքականութեան ալֆան և օմէգան“։

Կոմս Սթանիսլաս, „Թայմզի“ մէջ՝ ի նպաստ պրուսական լեհերուն կոչ մը ուղղելով կըսէ։ „Ոտնակոխ ընելով մարդկայնական իդէալը, բրուսական դիւանապետութիւնը կը հրամայի փճացնել ամբողջ ազգի մը իրաւունքները և գաղթագործումով խորտակել լեհերու ազգային ոգին...։ Այսպիսի յափշտակիչ միջոցները անպատուութիւն կը ձգեն մեծ կայսրութեան մը վրայ՝ որ բարեկիրթ և ըստամիտ ըլլալու յաւակնութիւնը ունի...։ Այդ միջոցները պիտի յեղաշրջեն միջազգային յարաբերութիւնները և առաջ պիտի բերեն յեղափոխական փրօփականդ...“։

„Դժուար է, կըսէ այս առթիւ եւրոպական թերթ մը, ժողովրդի մը լեզուն բռնադատել որ արտայայտութիւնն է իր հոգուն և մտածումին, դժար է խլել զայն, նոյնիսկ փողով, իր երդիքէն և հողէն։ Եթէ Լեհաստանը պիտի գերմանանար, մինչև օրս եղած կըլլար արդէն։ Հայրենասէր ժողովրդի մը մէջ բարոյական ուժը միշտ կը յաղթանակէ նիւթական ուժին“։

Լեհերու դէմ Գերմանիոյ Պիզմարքեան բռնակալական ծրագիրը, կը բաղխի Պիզմարքի „անկշռելի“ գաղափարին, որուն առջև երկաթէ նախարարը խուլ սարսուռ մը կզգար։

Լեհական հայրենասիրութիւնը, անօրէն և տմարդի բռնութիւններու դէմ, մէկէ աւելի շօշափման կէտեր ունի հայ ժողովրդի կեանքին, որ նոյն աշխարհագրա-

քաղաքական պայմաններու և նոյն հակամարդկային անիրաւութիւններուն ենթակայ է։ Ամբողջ լեհ աշխարհը, ոտի կանգնած գերմանական կոպիտ անարդար և յափշտակիչ քաղաքականութեան դէմ, կը հնչեցնէ, ի լուր աշխարհի, իր հայրենասիրական երգը,

„Լեհաստանը մեռ գոյութիւն ունի“։

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ։ — Տիգրանակերտի սպաննութիւններուն և հարստահարութիւններուն լուրերը, անգլիական լուրջ մամուլի մէջ, անակնկալ կերպով, վեր կը հանեն նորէն հայոց հարցը և այժմէութիւնը կուտան անոր, որ զուրկ չէ շահեկան բլլալէ։

„*The Nation*“, ազատական կուսակցութեան շատ ծանրակշիռ մէկ թերթը ամփոփ հաղորդելով „գիշատիչ“ քրդերու արարքները կը յարուցանէ հայոց խնդիրը սա բառերով. „Միևնոյն ժամանակ ամենակարևոր է որ բան մը կատարուի հայերը փրկելու համար։ Նոյնիսկ Գերմանիոյ դեսպանը շարժեցաւ։ Մենք հիմա, չը պիտի գտնէինք Ռուսիա իբր հակառակորդ, ինչպէս գտանք 1895-ին։

Իսկ „*Times*“ մէկ երկու ամիս առաջ հրատարակած մանրակրկիտ ուսումնասիրութեան մը մէջ Լիբանանու մասին, ցոյց կուտար թէ գործնական կիրարկութեան մէջ, այդ լեռան յատուկ առանձնաշնորհեալ Սահմանադրութիւնն ինչ թերութիւններ և ինչ առաւելութիւններ ունի։ Ուրիշ կարևոր շաբաթաթերթ մը „*The Spectator*“ յիշելով այդ ուսումնասիրութիւնը, կըսէ, „կը յանձնարարենք այդ ուսումնասիրութիւնն ամէն անոնց որոնք պիտի զբաղին հայոց խնդրովը“։

—

Հայաստանի մէջ բարենորոգումներ.— Շատ յատկանշանական է որ առաջին դիմումները, ի նպաստ Հայաստանի բարենորոգումներուն, կը լլան Իտալիոյ և Գերմանիոյ դեսպաններուն կողմէն։ Վեց օր առաջ, սոյն երկու դեսպանները հանդուրշն կերպով—իտալական դեսպանատան խորհրդականի մը խօսքին նայելով—Դրան ուշադրութիւնը հրաւիրեցին անյապաղ վարչական բարենորոգումներ մտցնելու պէտքին վրայ հայկական վեց վիլայէթներուն մէջ ուր, քան երբէք, կարգը չէ վերահաստատուած և ուր մեծ տերութիւններու միջամտութիւնը չէ կարող այլևս երկար ուշանալ։ Գերմանիոյ այսպիսի դիմումներու նախաձեռն բլլալը, ցոյց կուտայ թէ այդ պետութիւնը կանխաւ համաձայնութեան եկած է Դրան հետ այդ դիմումի մասին։ Նոյնպէս Իտալիոյ մասնակցութիւնը այս պարագային, ապացոյց է անոր իր դաշնակցին հետ համերաշխ գտնուելուն, առջևը առնելու համար թիւրք կայսրութեան մէջ եւրոպական սեպ միջամտութեան։ Հակամիջամտական գաղափարին, որը Գերմանիոյ շահախնդիր դաւանանքն է, Իտալիան պարզապէս հաճ կերևի։

Սակայն Հայաստանի մէջ կացութիւնը, այս բոպէիս, այնքան ծանր է, որ Դուռը շատ լաւ կըմբռնէ այն նոր դերը որ տերութիւնները տրամադիր են կատարել և որու մասին իրեն լուր տուած է ժամանակին, այն տերութեան կողմէ, որ սովորութիւն ունի թիւրքիոյ լրատուն բլլալու (ըսել կուզէ Գերմանիան)։

Լաւ կայ թէ հայկական խումբերը, որոնց մէջ կան քրիստոնեաներ և միւսիւլմաններ, այնպէս մը կը գործեն Պիթլիսի և Վանի վիլայէթներուն մէջ, որ կրնան վերջի վերջոյ յաղթանակել քրդական ահ ու սարսափները, որ աւելի քան երբէք, զարհուրելի է։ Մուշի մօտ, քրդական զօրաւոր խումբ մը, որ թալանած և աւերած էր երկու մահմեդական գիւղեր, խառն հայ խումբերու մէկէն պարտութիւն կրելով, կծիկը կը դնէ, հայերը յաջողեցան գողցուած առարկաները ետ առնել և երկու գիւղերու բնակիչներուն վերադարձնել։ Թիւրք իշխանութիւնները լիովին կը բացակայեն. ժողովուրդը իր ձեռքով կը տեսնէ արդարութիւնը։ Ահա թէ ինչո՞վ է փրկարար հայ խումբերու գործունէութիւնը։

—

Հռովմի „*Avanti*“!-ի մէջ կարդում ենք հետևեալ հեռագիրը Կ. Պոլսից։

Իշխանութիւնները բաց են արել երկրում մի ընդարձակ սահմանադրական պրոպագանդ, որի հեղինակները մեծ միջոցների տէր են։ Հրատարակուած են պրոգլամացիաներ։ ուր հրաւիրում են բոլոր կուսակցութիւններին, առանց ցեղի ու կրօնի խտրութեան՝ միանալ ու պահանջել սուլթանից սահմանադրութիւն, և մերժման դէպքում հարկադրել նրան բոլոր միջոցներով։ Պրոկլամացիաները տպուած են Էրզրումում։ Կարծւում է, որ Փոքր-Ասիան և մասնաւորապէս Էրզրումը կենտրոնն են յեղափոխական պրոպագանդի։

—

Ռուս մայրաքաղաքի թերթերը ծանուցանում են, Էրզրումում սկսեցին մասսային ձերբակալութիւններ ու խիստ տեսակի հալածանքներ, հէնց որ եկաւ նոր գեներալ նահանգապետը օժտուած բացարձակ լիազօրութիւններով։

—

Մինչև դեկտ. 18, Էրզրումի մէջ ձերբակալուած են 130 մահմեդականներ, որոնք կը պատկանէին թիւրք կոմիտէին։ Երզնկայի մէջ կոպաւի ուրիշ ձերբակալումներու և արտաքսումներու։ Սէյֆուլլահ փաշան Սալոնիկ գտնուած է սուլթանին ուղղած աղերսագիր մը, ծածկուած ստորագրութիւններով որ կը պահանջեր ազգային խորհրդարան։

—

Դուռը որոշեր է Անատօլուի ոստիկանութեան մէջ նոյն բարենորոգումները մտցնել՝ ինչ որ գործադրած է Էտիրնէի և Իզմիրի ոստիկանութեանց մէջ։ Այդ նպատակով ոպայակոյտի բաժնի պետ Օսման Նիզամի փաշան Էրզրում ղրկուած է։

—

Սահմանադրական շարժում Հայաստանում—Այս վերնագրով հետևեալ հեռագրական տեղեկութիւնը է հաղորդուած Կ. Պոլսից Վիեննայի *Fremdenblatt*-ին.

„Հիւպատոսների զեկուցումները Էրզրումից նկարագրում են դրութիւնը, իբրև վերին աստիճանի խռովալի։ Տաճիկ յեղափոխական մի կոմիտէ ուղղել է ազգաբնակութեան մի ընդարձակ կոչ, որը մասնաւորապէս բողոքում է նոր սահմանուելիք տուրքերի դէմ, իսկ ընդհանրապէս դատապարտում է բռնակալ կառավարութիւնը և յորդորում է ժողովրդին դուրս գալ իր անտարբերութիւնից։ „Կոչը“ նկարագրում է կենտրոնական կառավարութեան մէջ տիրող կաշառակերութիւնը, որի շնորհիւ և մշտապէս արտադրւում է մանր կաշառակեր պաշտօնեաների բանակը գաւառների համար։ Վերջապէս մատնացոյց լինելով բոլոր ուրիշ կառավարութիւնների վրայ, որոնք արդէն աշխատակցութեան են կոչել ժողովրդին—թիւրք յեղափոխական կոմիտէն պահանջում է ժողովրդական ներկայացուցչութիւն. „կոչի“ մէջ շեշտուած է, որ եթէ Միթհատ փաշայի սահմանադրութիւնը պահպանուած լիներ, Օսմանեան կայսրութիւնը չէր կորցնի և ոչ մի կտոր իր հողերից։ Քրիստոնեաները հրաւիրւում են մասնակցութեան։

Լաւ կայ, թէ Էրզրում շուտով կը ղրկուի քննիչ յանձնաժողով“։

—

Վիեննայի „*Freie Presse*“-ին հաղորդում են Սոֆիայից.

Սարաֆովի և իր ընկերոջ սպաննութիւնը աննկարագրելի ցնցում՝ առաջ բերաւ ամբողջ ազգաբնակութեան մէջ։ Ողբում են Մակեդոնիայի անզուգական, անփոխարինելի

հերոսին։ Այդ քսամնելի ոճրի մէջ շատերը մեղադրում են սոցիալ-դէմոկրատ Սանդանսկու կուսակցութիւնը, որ աշխատում է նոյնպէս Մակեդոնիայում, որ կատաղի մրցակից է սարաֆովական կուսակցութեան և վաղուց ձգտումում էր սշնչացնել նրա առաջնորդին, որպէսզի ինքը գրաւէ նրա տեղը։ Մարդասպանը, որի իսկական անունը դեռ յայտնի չէ, իբր թէ Սանդանսկու ղրկած մարդն է, որ բարեկամաբար մտնելով Սարաֆովի տունը, երկար „ընկերական“ զրոյցից յետոյ յանկարծ դուրս է հանում բրաւունինգ ատրճանակը և ուղղում է Սարաֆովի ու Գաբրովանովի վրայ։ Վերջինս սպանւում է տեղն ու տեղը, իսկ Սարաֆով—մօտ կէս ժամւայ տանջանքներից յետոյ։

Սպանողը անհետացած է։ Մայրաքաղաքը արհաւիրքի մէջ։ Ժողովրդական զայրոյթին սահման չը կայ։ Պէտք է յիշել, որ սուլթանի կառավարութիւնը 2000 ոսկի էր խոստացել Սարաֆովի գլուխը բերողին և այնուամենայնիւ, ոչ ոք չէր գտնւել Մակեդոնիայում, որ ձեռք բարձրացներ Սարաֆովի վրայ։ Ուրիշ կասկածներ կան, որ վերաբերում են թիւրքական կառավարութեան գործակալներին։

Ոստիկանութիւնը անդադար խուզարկութիւններ է անում Սոֆիայի սոցիալ-դէմոկրատների մէջ։

Սպանուածների մարմինները դրուած են ս. Գէորգ եկեղեցում, ուր հազարաւորները գալիս են իրենց յարգանքը մատուցանելու։ Շարունակ պսակներ են տեղում։ Այն պատգամաւորների մէջ, որոնք հեռագրով ծանուցել են իրենց մասնակցութիւնը թաղման հանդէսին՝ գտնւում է նաև Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատգամաւորութիւնը։

—

Դուռը տեղեկացոյց մը կը պատրաստէ իր և օտար դեսպաններուն ղրկելու որուն մէջ կը հերքէ ամբաստանութիւնը թէ թիւրքական կառավարութիւնը ինքն է Սարաֆովը սպանել տուողը. նաև Սարաֆովի թաղման երեք նախարարներու ներկայութենէն կուզէ հեռացնել թէ Սոֆիայի պաշտօնական շրջանները կը հովանաւորեն պուլկարական կոմիտէն։

—

Կայսրաւ Ռուսաստանի II Դումայի 55 սոց.-դէմոկրատ պատգամաւորների դատը։ Նրանց մի մասը արդէն աջողել էր փախչել արտասահման։ Յայտնի է, որ ռուսական կառավարութիւնը մեղադրում էր նրանց՝ գաղտնի տերրորական միջոցներով պետական կարգը տապալելու ձգտումների մէջ։ Զը նայած, որ այդ մեղադրանքը ինքնին արդարացուցական մի հակասութիւն էր—քանի որ սոց.-դէմոկրատները առհասարակ հեռու են տերրորական-յեղափոխական միջոցներից—չը նայած, որ հիմնական և ոչ մի ապացոյց կար, այնուամենայնիւ պատգամաւորները դատապարտուեցին զանազան պատիժների, սիբիրեան աքսորի, իսկ մի քանիսը տաժանակիր աշխատանքի ամբողջ հինգ տարով...

—

Ֆինլանդիայում նորից եռանդով մղւում է ռուսացման յետադէմ արշաւանքը։ Ընդհանուր նահանգապետ Գերարդը հրաժարական է տուել, յայտարարելով, որ Պետերբուրգի քաղաքականութեան համակերպել չի կարող։ Լուր կայ, որ ցարը մտադիր է նրա տեղը նշանակել հռչակաւոր գեներալ Կ ա ռ ա լ բ ա ր ս ի ն, որ Օդեսսայի հրեական բոլոր պոգրոմների կազմակերպողն է և որ այժմ իր պաշտօնից հրաժարւած լինելով՝ գտնւում է Պետերբուրգ։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

Ընկերներ!

Սեպտեմբերի 21-ին Ալէքսանդրապոլում տեղի ունեցաւ մի յանդուգն խաչադողութիւն։ Անյայտ մարդիկ նոյն քաղաքի Ե. Բաղդասարեանին իր տան դռնից առևանդելով, տարան թագցրին նրան և մօտ մի շաբաթից յետոյ փրկանք պահանջեցին 35,000 ռուբլի։ Առևանդիչները իրենց նամակի տակ դրոշմած էին ռէզինի շարժուն տառերից շինած մի կնիքով՝ „Լեռուչից օտրեադ մակսիմալիստաց“։ Միևնոյն ժամանակ Թիֆլիս է գալիս Ալէքսանդրապոլից երբեմն կենտր. կոմիտէի անդամ Վահանը (յայտնի Ֆէլիկս կեղծ անունով) և ներկայանում է իբրև միջնորդ առևանգողների պատուիրակ մի ռուս օրիորդի և Բաղդասարեանների միջև՝ գործը բարեկամաբար վերջացնելու համար. և արդարև պահանջւած փրկանքի գումարը իջեցնում են 23,000 ռուբլու։ Վահանի „միջնորդութիւնը“, նրա հետ, նրա մօրաքրոջ որդի Ա. Մ.-ի աջակցութիւնը, և այն պարագան, որ վերոյիշեալ ռուս օրիորդը վաղուց ծանօթ էր այդ երկուքին և նրանց հետ յաճախ երևացել է Ալէքսանդրապոլում,—այդ բոլորը կասկած յարուցին, որ „մաքսիմալիստների“ անուան տակ կատարւած այդ դրամաշորթութիւնին անմասն լինելու չէին այդ երկու պարոնները։ Այդ միջոցին Բիւրօն Ալէքսանդրապոլից ստանում է մի քանի նամակներ, որոնք առևանդումի այդ գործում ամբաստանում էին բացի Վահանից և Ա. Մ.-ից նաև մի շարք ուրիշ անձնաւորութիւնների—ոմանք դաշնակցական, ուրիշներ համակրող Դաշնակցութեան, միւսները չէզոք անձեր, տխուր անցեալի տէր։

Բիւրօն պարտք համարեց անմիջապէս մանրակրկիտ քննութեան ձեռնարկել նոյնիսկ տեղումը, և փրկանքը դեռ ևս վճարած չէր, երբ Բիւրօի կողմից լիազօր իրաւունքներով մի քննիչ ուղարկուեցաւ Ալէքսանդրապոլ սեպտ. 29-ին։ Հետևեալ երկու օրւայ մէջ քննութիւնը երևան բերաւ գործը իր բոլոր հանգամանքներով. յանցապարտները ձերբակալուեցան, գտնուեցաւ այն թագստոցը, ուր պահում էր Եգոր Բաղդասարեանը և նա երեքշաբթի, 2-ին առ. ժամը 10-ին ազատուեց բանտարկութիւնից մեր ընկերների ջանքերով։

Զը նայած սրան, Վահանը և իր մեղսակիցները յաջողում են հետևեալ օրը հսկտ. 3-ին ժամը 12-ին ստանալ ամբողջ փրկանքը Թիֆլիսում և անյայտանալ, որի մասին իր ժամանակին հաղորդուեց մեր բոլոր մարմիններին։

Կազմակերպութեան համար աւագ կարևորութիւն ունեցող խնդիրը ճշտելն էր, թէ որչափով և որոնք մեր ընկերներից մասնակից էին այդ գործին։ Ուստի նախնական քննութիւնը վերջանալուց մի քանի օր յետոյ հարևան և տեղական կենտր. կոմիտէների մասնակցութեամբ դատական ատեան կազմեցաւ ամբաստանուածներին քննելու և դատելու համար։

Ատեանը Ե. Բաղդասարեանի առևանգման գործին իբր գլխաւոր հեղինակներ ճանաչելով Վ ա հ ա ն ի ն, Խէչօին՝ անդամ Քարի Կ. կ.-ի և դաշնակցական—Ա. Մ.-ին որոշեց։

1) Խէչօին արտաքսել Դաշնակցութեան կազմից, արգելելով նրան երեք տարի անընդհատ բնակել Ալէքսանդրապոլ քաղաքում, և բոլոր դաշնակցականների վրայ պարտաւորութիւն դնել բոյկոտի ենթարկել նրան։ Միանգամայն առաջարկել պատշաճ մարմնին իսպառ արտաքսել Խէչօին Դաշնակցութիւնից և այդ մասին հրատարակել „Դրօշակ“-ի մէջ։

2) Վահանին, որ խոյս է տուել բացատրութիւնից, մի ամիս ժամանակ տալ ներկայանալու քննիչ ատեանին, հետը բերելով նաև Ե. Բ.-ի փրկանքի գումարը։ Հակառակ պարագային՝ նրա գործը յանձնել Հ. Յ. Դ. Կովկասեան Ահաբեկիչ Մարմնին։

3) Ա. Մ.-ին մի ամիս ժամանակ տալ ներկայանալու քննիչ ատեանին, հետը բերելով նաև Ե. Բաղ. փրկանքի գումարը։ Հակառակ պարագային՝ ի բացակայութեան նրան դատապարտել իսպառ արտաքսումի Դաշնակցութիւնից, հրատարակելով „Դրօշակում“ և իսպառ արգելել նրան վերադառնալ Ալէքսանդրապոլ։

4) Միւս յանցաւորներին, որոնք գործիք եղած էին այդ երեքի ձեռքը, դատական ատեանը երկու խումբի բաժանեց։ Առաջին խմբին պատկանողներին, որոնք որ մօտիկ անցեալում իրենց կեանքի գնով անձնուիրաբար ծառայած էին յեղափոխական գործին և անկեղծ զղջում էին յայտնում իրենց մեղսակցութեան համար—ատեանը ենթարկեց թե-

թև պատիժներին, յայտարարելով միանգամայն, որ կազմակերպութեան ամենախիստ պատժին կը ենթարկուին, եթէ երկրորդ անգամ գտնուին նմանօրինակ սեռէ յանցանքի մէջ։

Երկրորդ խմբի մեղսակիցներին, որոնք անուանական դաշնակցականներ եղած էին, սակայն ոչ դաշնակցականներ, ատեանը որոշեց կազմակերպութիւնից դուրս յայտարարել նրանց։

Սրա հետ միասին ատեանը որոշեց գաւառական բոլոր ծախսերը ստանալ դատապարտեալների։

Ծանուցանելով այս տխուր և յաւալի դէպքի մասին Բիւրօն պարտ է համարում յիշեցնել, որ համաձայն Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովի որոշումին, կազմակերպութեան մարմինները պարտաւոր են խիստ կերպով հայածել բոլոր նրանց, որոնք կազմակերպութեան անդամ մնալով հանդերձ կամ կազմակերպութեան անունից կը համարձակուին բռնի սեռէ միջոցով դրամ շորթել։ Դատարակութեան սեռէ անդամից։

Հ. Յ. Դ.
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Հոկտեմբերի 18, 1907.

ՏՕՆԱՆՄԱՆ

Քանի մը օրէ ի վեր քաղաքական պաշտօնեաներ և զինուորականութիւնը դօրձի վրայ են։ Կարգ մը պատրաստութիւններ ամենայն եռանդով առաջ կը տարուին։ Տօնախմբութիւններ պիտի կատարուին, որովհետև Մեծ օր մը կը մօտենայ։ Այս, ամենամեծ, ամենանդուրթ Մարգարէին բռնակալութեան դահի վրայ բարձրանալուն օրն է։ Օրն է այն բռնակալ Աբդիւլ Համիդին, որ վերջին երեսուն երեք տարուայ ընթացքին մէջ մեր երկիրը արիւնով ներկեց, այն անխղճին, որ մեր երկրին հարստութիւնը և բարեկեցութիւնը եւրոպայիներուն ծախսեց կամ նուիրեց և երկիրը այսօրուայ վիճակին հասցուց։ Այն արիւնռուշտ գազանին, որ դարերէ ի վեր քով քովի ապրող և իրարու հետ իբր եղբայր վարուող իսլամ և քրիստոնեայ տարրերու միջև թշնամութեան և ատելութեան սերմը ցանեց և հարիւր հազարաւոր անմեղներուն արիւնը մտաւ, այն հրեշին, որ ազատամիտ երիտասարդութիւնը ծովի յատակը իջեցուց. ուրեակայ մէջ հանգստութիւն փնտռող այն բուին, որ մեր շէն հայրենիքը անապատ դարձուց։ Այն բռնապետին, որ սրկ իր կամքը և քմահաճոյքը կատարելու համար ամբողջ ազգը սարկացուց, այն անզգամին, որ մեր հետ կրօնակից և հայրենակից արաբները մեղի դէմ ապստամբելու բռնադատեց, այն վամպիրին, որ մեր Մանուկ Սահմանադրութիւնը իր խանձարուրին մէջ խեղդեց։ Ան-ը 33 տարուայ սուլթանութեան թուականը հազարաւոր անմեղներու արիւնով դրոշմած հարստահարութեան և բռնակալութեան, յուսահատութեան և անկումի թուականն է։

Այսօր ո՛չ թէ ուրախութեան այլ անէծքի օրն է։ Այսօր մարդասպաններու, բռնակալներու և անոնց արբանեակները եղող ցածոգի և ստոր պաշտօնեաներու օրն է։ Այսօր հարստահարած ժողովուրդը ոչ թէ կը ցնծայ, ընդհակառակը մինչև երկինք կը բարձրացնէ իր անէծքը և կը խնդրէ, որ Մեծ-Մարդասպանը կորսի և գահը գլխուն վրայ փլէի։ Այսօր շռայլութենէ ու ցոփութենէ, հարստահարութենէ ու բռնութենէ զատ ուրիշ արբութիւն չը ճանչցող ստոր ու խայտառակ պաշտօնեաներու յատուկ օր մըն է. թող ոնոնք սարքեն ուրախութիւններ։ Մեր հայրենակիցներու արցունքի օրն է այսօր։ Մեր և ժողովուրդի տօնախմբութեան օրը ազատութեան օրն է, այն օրը երբ բոլոր հարստահարիչներու և բռնաւորներու զրկանքն ու բռնութիւնները վերջանան և մեր դժբախտ հայրենիքի մէջ արդարութիւնը պիտի իշխէ։

Իտալիա, իր մեծ հերոսին՝ Գարիբալդիի և Զուիցերիա՝ Վիլհելմ Տելլի յատուկ տօնախմբութիւններ կը սարքեն։ Շատ մօտ ապագայի մէջ մեր հայրենիքը բռնութեան ճիրաններէն ազատող Գարիբալդիներ, Վիլհելմ Տելլեր երեւան պիտի գան և գալու վրայ են։ Այն ատեն մեր երկրի զանազան տարրերը, առանց կրօնի և ազգի խտրութեան խումբ-խումբ պիտի գան և լի երախտագիտական զգացումով իր իսկական հերոսներու համար ցնծութիւններ պիտի սարքեն մինչև այն օրը՝

Ընկցի՜ն բռնաւորները և անոնց տօները։
Կեցցէ՜ ազգը։
Կեցցէ՜ սահմանադրութիւնը։

ՕՍՄԱՆԵԱՆ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷ

Ա. Զ Դ.

Մեր ընթերցողներէն եւ ընկերներէն կը խնդրուի վերանորոգել իրենց հասցէները, պարզ և որոշ գրած, եթէ կը ցանկան առաջիկայ տարւայ մէջ կանոնաւոր ստանալ «Դրօշակի» համարները։

ՆԻՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Պիւրօն ուսցած է.

Զուիցերիա.—Նոյեմբեր եւէր 2 ֆր., Մեթենազործ Գրիգոր 10 ֆր.:
Անգլիա.—Լիվրպուլ Խ. Մ.-էն 20 ֆր.:
Ռումանիա.—Եաս՝ Պ. Վարդ.-էն 40 ֆր.:
Դումար 62 ֆրանկ.

ԳԱՆՁԻ ԿՕՄԻՏԷ.—1905 մայիսէն մինչեւ 1907 նոյեմբ 1 | 14. Դանիել 47. 10 դուրուշ, նեսեւնայ խումբերէն՝ Վրէժ՝ երկու անգամով 383. 35, Ապարամ 141. 30, Նոյն խումբէն 94. 20, Վրէժ 70. 35, Կայծակ 70. 3 , Արիւն 106. 10, Վազգէն 70. 35, Ճինանէն 23. 25, Պարոյրէն 23. 25, Գրոգէն 23. 25, Գեռնիէն 23. 25, Պարոյրի ձեռամբ 53. 5, Օժանդակ տիկնանց ձեռամբ 626, Սոլախի ձեռամբ 129. 35, Կայծակէն 11. 30, Վանանէն 94. 20, Շուարշ եւ Գառամբոյէ 124. Առոյէն 47. 10, Մեծ աղաներէ 70. 35, Հայրենասէրէ 127 դրշ.: Դումար 2365 դուրուշ եւ 5 փարայ:

Պուլգարեան Կենտր. Կոմիտէ՝

ՎԱՌՆԱՑԻ ԿՕՄԻՏԷ.—(1907 փետր. 10 էն մայիս 11) հետեւեալ խմբերից՝ Վրէժ 18, Առիւծ 92, Շուշան 10, Ռոշտունեանց 85, Հայրիկ 92, Տարօն 102, Ձինարի Աղբիւր 64, Շուշան 39. 50, Տօպրանցայի Դաշնակցական խումբերէն 24, Անդրանիկ 15, Փոքորիկ 44, Յառաջդիմական 30, „Դրօշակի" բաժնեգին 37. 50: Հրայր 26, Յառաջդիմական 16, Մարտիկ 49, Փոքորիկ 25, Տարօն 56, Ռոշտունեաց 66, Շուշան 30.50. Հայրիկ 41, Ձինար 68, Հրայր 10, Անդրանիկ 27, Կուկունեան 95, Արամ 80, Պաղանդի եւէր 2. 70, Դատավարութեան տուքիւ 7 ֆրանկ, գումար 1256 ֆրանկ 20 սանթ.:

ՇՈՒՄԼԱՅԻ ԽՄԲ. ԺՈՂՈՎԷ.—Հետեւեալ խմբերից՝ Կայծակ 70 ֆր. 50 սանթ., Ուժանակ 71, Անդրանիկ 50, Վրէժ 3. 65, Բաբկէն Սիւնի 8. Թատերական խնոյէ 11, Դաշտային հանդէսէ 10. Լսարանէ 12. 15, Նէր Թիւրիոյ խոդաէն 5, Կայծակ խումբի վինականութենէն 81, Դանձանակէն 12. 0: Դումար 334 ֆր. 80 սանթ.:

ՊՈՒՐԿԱԶԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷ.—(1906 նոյեմ. 1-էն մինչեւ 31 մարտ 1907) հետեւեալ խմբերից՝ Սասուն 60, Արամ 30, Անտոր 54, Եփրատ 42, Աղթամար 44, Բուխ-Քարեր 36, Անդրանիկ 55, Հրայր 30, Արաբօ 42, Պեսօ պուլկարացի 79, Օժանդակ 92. 80, հանգանակութիւն բանտարկեալներու 363: Դումար 927 ֆր. 80 սանթ.:

ՍՕՖԻԱՅԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ.—Հետեւեալ խմբերից՝ Անդրանիկ 26. եւս 6, Թաքուլ Զարմանեան 25, եւս 20, Օրիորդաց 10, Սերոբ Աղբիւր 60, եւս 52, Հրայր 34, Սեպուհ 288. 50, Անդրանիկ 23, Հանգանակութիւն՝ Ց. Մ. 160, Մանիշակ 20, Եղբ. Փր. 20, Գր. Մխիթար 5, Գրիգորեան 100, Ս. № 9962՝ 100, Նշանիկեան 10, Սիսակ 10, Ձինիկ 2, Մորուք 2, Յոհնան Մխիթար 5, Կ. Գ. 100 (№ 2726) Ս. Նիկ. 50, Թագուորեան 60, Լօնկէ 100: Դումար 1288 ֆր. 50 սանթ.:

ՌՈՒՍՁՈՒԿԻ ԿՕՄԻՏԷ.—(1906 նոյեմբեր 29-էն մինչեւ 907 յունիս 2) հետեւեալ խմբերից՝ Վրէժ 42 լէվ եւս 41, Կարմիր Խաչի Այծեմիկ 31, եւս 24. 50, Կարմիր Խաչի Արշալոյս 19, եւս 20, Կարմիր Խաչի Մարօ 83, Ռաշօ 16. 50 եւս 12, Թաքուլ 17. 50, եւս 17. 50, Շաֆէ 44. 50, եւս 37. 50, Հրայր 49 եւս 22, եւս 6, Պեսօ 18, Բաբկէն Սիւնի 24 եւս 24, Գրիգորիոր 11, Սիփան, 16, Հանգանակութիւններէ՝ Տ. Ա. . 80, Մարօ խումբի վինակ. 340, Այծեմիկ խումբի ներկ. 508, Սվիշթով՝ Առիւծ խ. 13, Նիքօպոլէն՝ եւէր Ս. Մ. 10 Խ. Պ. 1, Մ. Ա. 5, Բարեգործ. եղբայրութենէն 10, Գօրապիայի ընկերներէն եւէր՝ 62. 50, եւս 4. 50: Դումար 1610 ֆրանկ:

Ընդհանուր գումար 5417 ֆր 30 սանթ.:

Այս համարը բաղկացած է 24 երեսից